Ազգ
Azg
10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2010 ՈՒՐԲԱԹ 228(4608)
ISSN: 1829-1651

# Հրեա պրոֆեսորների կոչը՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը

**Մ. Նահանգներում եւ Իսրայելում ապրող հրեա պրոֆեսորների մի խումբ Իսրայելի կառավարությանն է դիմել Առաջին աշխարհամարտի օրերին հայերին պատուհասած ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու խնդրանքով, տեղեկացնում է «Արմինյըն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի նոյեմբերի 20-ի համարը՝ օգտվելով israelnationalnews.com կայքից։**

**Ըստ «Ֆիրաս նյուզ» գործակալության՝ Վաշինգտոնի «Ջորջթաուն» եւ Ռամաթ Գանի «Բար Իլան» համալսարաններից չորս պրոֆեսորներ այդ մասին նամակ են հղել երկրի վարչապետ Բենիամին Նաթանյահուին։ Նամակ-խնդրանքում նաեւ կոչ է արվում նպաստելու Թուրքիայում ապրող միլիոնավոր քրդերին ինքնավարություն շնորհելու գործընթացին։**

**«Արդեն 26 երկրներ եւ ամերիկյան 44 նահանգներ ճանաչել են հայերի դեմ գործված ցեղասպանությունը, բայց Հոլոքոսթը ապրած Իսրայելը դեռեւս դրանց շարքում չէ», նշված է նամակում։**

Հ. Ծ.

# Ի՞նչ կա պաշտոնանկությունների տակ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Երեկ կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրն էր։ Հետաքրքրական մի զուգադիպությամբ երեկ նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնից ազատեց արդարադատության նախարար Գեւորգ Դանիելյանին՝ պաշտոնեական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար։ Վարչապետը կառավարության նիստում ավելի բառացի էր՝ նա չի կատարել ԴԱՀԿ ծառայության պետին պատժելու հանձնարարականը։ ՀՀԿ-ի քվոտայով նախարար դարձած մարդը չի կատարել իր անմիջական եւ կուսակցական վերադասի հանձնարարականը։ Իսկ թե ինչո՞ւ չի պատժել Գեւորգ Դանիելյանը ԴԱՀԿ ծառայության ղեկավար Միհրան Պողոսյանին՝ սա մնում է չվերծանված, այն դեպքում, երբ նախարարի կայքում նրա արձակած վերջին հրամանի մասին տեղեկությունը ԴԱՀԿ ծառայության պետին տրված խիստ նկատողությունն է՝ հարկադիր ծառայողին անհարիր վարքագծի համար։ Էլի անհասկանալի է։ Այսինքն՝ երեւի ինքը պիտի ազատեր, որ իրեն չազատեի՞ն, ստացվում է։ Մանավանդ՝ ԴԱՀԿ ծառայության պետին ազատելու լիազորություն Գեւորգ Դանիելյանը չունի։ Եվ էլի ստացվում է, որ ԴԱՀԿ ծառայության ղեկավարը էթիկայի կանոնների լուրջ խախտում է թույլ տվել, բայց դրա համար պատժվել է արդարադատության նախարարը։

*Տես էջ 8*

*ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

# Ընդդեմ համատարած զորբայության

**Հայաստանի քաղաքական դաշտում տեղի ունեցած վերջին իրադարձությունները մեկ անգամ եւս փաստում են, որ ցավոք՝ զորբայությունը վաղուց արդեն դարձել է մեր երկրի քաղաքական մշակույթի մի մասը։ Իրեն քաղաքական վերնախավ համարող զանգվածը աչքի չի ընկնում ոչ իր բարեկրթությամբ եւ ոչ էլ իր գրագիտությամբ ու զարմանալին այն է, որ անկրթության նման դրսեւորումները նրանք համարում են առավելություն եւ չեն էլ ցանկանում թաքցնել։ Նմանատիպ պահվածքը մեր իրականության մեջ ձեւավորվել է շատ վաղուց եւ իրեն քաղաքական վերնախավ համարողների կողմից ընկալվում է որպես բնական, քանի որ «ընտրյալները» իրենց թերաճությունը փորձում են թաքցնել հենց նման տգեղ եւ տգետ պահվածքով, այն ներկայացնելով որպես առավելություն։**

**Հանրապետության նախագահի խիստ գնահատականը եւ դրան հետեւած քայլերը ողջունելի են, սակայն հիմնական խնդիրը շարունակում է մնալ, եւ հարց է առաջանում՝ արդյոք նման խիստ կեցվածքը նորմ է դառնալու մեր կյանքում, թե՞ մենք ականատես ենք մի իրավիճակի, երբ պատժվում է նախագահի աշխատակազմի աշխատակցի վրա ձեռք բարձրացնողը եւ կամ հանձնարարականը չկատարող նախարարը միայն։ Նման հարցադրումը, կարծում ենք տեղին է, քանի որ նախկինում նմանատիպ գործողությունները անպատիժ էին մնում, ու որոշ մարդկանց մոտ տպավորություն ստեղծում, որ հենց սա է առաջ գնալու իրական ձեւաչափը։**

**Արմենական-ՌԱ կուսակցությունը այնուամենայնիվ ակնկալում է, որ վերջին իրադարձությունները չեն դառնա մեկանգամյա գործողություն եւ տարբեր պաշտոնատար անձանց լկտի ու անկիրթ պահվածքը, անկախ նրանից թե ում նկատմամբ է դա կատարվել, կհայտնվի իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում եւ կդառնա պատժելի։**

*ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ*
*ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ*

# Նալբանդյան-Լավրով-Մամեդյարով

Երեկ Մոսկվայում տեղի է ունեցել Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի, Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի եւ Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամադյարովի աշխատանքային հանդիպումը։

Հանդիպմանը շարունակվել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանն առնչվող օրակարգային հարցերի քննարկումները։ Այս մասին հայտնեցին ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչությունից։

Հ. Ա.

# «Ժառանգությունը»՝ ԼՂՀ ճանաչման օրինագծի տապալումից հետո

**Երեկ Ազգային ժողովի մեծամասնությունը քվեարկությամբ տապալեց «Ժառանգության» ներկայացրած Լեռնային Ղարաբաղը ճանաչելու վերաբերյալ օրինագիծը, որին կողմ քվեարկեցին այդ կուսակցության անդամներն ու ՀՅԴ-ի՝ նիստին ներկա անդամները՝ 13 պատգամավոր, իսկ կոալիցիան չմասնակցեց քվեարկությանը, այդպիսով քվորում չապահովելով։ Օրինագծի տապալումից հետո երեկ երեկոյան «Ժառանգությունը» հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ նշվում է, թե ճանաչման որոշումն ուշացել է դեռ՝ հրադադարի հաստատմանը զուգահեռ պետք է լիներ ժամանակին։ Իսկ այսօր բանակցային գործընթացի հիմքում դրված խաղի կանոնները ձեռնտու չեն հայկական կողմի կենսական շահերին եւ փոխել դրանք հնարավոր է միայն Հայաստանի կողմից Արցախի Հանրապետության ճանաչումով։ Մինչդեռ երեկվա «խոսուն քվեարկությունն ու դրա արդյունքները՝ կոալիցիան կազմող քաղաքական ուժերի չքվեարկելու խորապատկերին, եւ 13 «կողմ» ձայները ցույց տվեցին, որ իշխող վարչակարգը համակերպվել է դրսից հրամցված այն մտքի հետ, որ պետք է զիջեն հայ ազգային արժեքները՝ ներառյալ Արցախի ազգային օջախները շրջան առ շրջան, հարցականի տակ դնելով եւ չճանաչելով Արցախի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու անվտանգությունը»։**

Մ. Խ.

# Հատուկ պայմաններ գյուղացիների ավտոապահովագրման համար

**Վարչապետ Տիգրան Սարգսյանը երեկ հանձնարարական տվեց ոստիկանությանը՝ հազարավոր գյուղացիների համար ստեղծել բարենպաստ պայմաններ, որպեսզի նրանք «երկու-երեք ամիսների ընթացքում շահագործեն իրենց ավտոտրանսպորտը եւ ապահովագրություն իրականացնեն միայն այդ ժամանակահատվածի համար»։ Ըստ վարչապետի, դա նշանակում է, որ ոստիկանությունը պետք է հատուկ կարգեր սահմանի հեշտացված ծառայություն մատուցելու համար։**

Ա. Մ.

# Հղի կանանց նպաստները կփոփոխվեն

**Հղի կանանց վճարվող ժամանակավոր անաշխատունակության սոցիալական նպաստների առնչությամբ հնչած մտահոգությունները ընդունելով, երեկ վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ պատրաստվել է նոր օրենքի նախագիծ, որը նպատակ ունի ստեղծել Հայաստանում ծնելիությունը խթանող միջավայր։ Քննարկումներից հետո այն կներկայացվի Ազգային ժողով։**

# Դողան Ախանլին ազատ է, արդարացման վճռին դեռ սպասում են

**Թուրք գրող Դողան Ախանլին իր ձերբակալությունից 4 ամիս անց ազատ արձակվեց։ Օգոստոսի 20-ից նա գտնվում էր նախնական կալանքի տակ։ Թեեւ նա դեռ չի արդարացվում, բայց դրա հնարավորությունը մեծանում է, դեկտեմբերի 8-ի ուշ երեկոյան Ստամբուլից հաղորդեց ARD-ի թղթակիցը՝ հրազեկելով, թե դատավարությունը շարունակվելու է 2011-ի մարտի 9-ին։ Ինչպես տեղեկացրել էինք մեր ընթերցողներին երեկվա «Ազգում», Ստամբուլի դատարանը դեկտեմբերի 8-ին սկսել էր նրա դեմ հարուցված գործի քննությունը։ «Դատարանի վճիռը դրական եմ գնահատում, կարծիք է հայտնել Ախանլիի քյոլնաբնակ փաստաբան հայազգի Իլիաս Ույարը, թեեւ մենք պահանջում էինք անհրաժեշտ արդարացումը։ Բայց լավատես ենք»։**

**Չորեքշաբթի օրը դատարանը լսել է վկաներին, որոնք փաստել են, թե ոստիկանությունը մեղադրական հայտարարությունները կորզել է խոշտանգումների, ճնշման տակ։ Վկաներն այնուհետեւ հետ էին վերցրել իրենց ցուցմունքները։ Դատարանը քննության հենց առաջին օրը անհիմն է համարել, թե թուրք գրողն է 20 տարի առաջ տեղի ունեցած ավազակային մի հարձակման ու դրան ի հետեւանք սպանության գլխավոր կասկածյալը։ Նրա դեմ ներկայացված հայցն ու մեղադրանքը, ինչպես եզրակացնում են գերմանացի դիտորդները, երերուն են։ ARD-ի իրավական հարցերի փորձագետ Քյուննեքեի կարծիքով, 2011-ի մարտին արդարացման դատավճիռ կայացնելու առումով որեւէ արգելք չկա։**

**Հիշեցնենք, որ թուրք գրողի դատավարությանը ներկա են եղել նրա բազմաթիվ երկրպագուներ, համակիրներ Քյոլնից, որտեղ 2001-ից ապրում է։ Քյոլնաբնակ լրագրող Գյունտեր Վալլրաֆֆը դատարանում տիրող մթնոլորտի մասին դրական կարծիք է հայտնել՝ մեծ ուրախություն որակելով թուրքական դատարանի՝ գրչակից ընկերոջն ազատ արձակելու վճիռը։ Ինչպես ավելի ուշ փոխանցել է dpa-ին, Ախանլին մինչեւ Ծննդյան տոները Գերմանիայում կլինի։ Ֆիզիկապես իրեն լավ է զգում, մինչեւ առավոտյա 3-ը միասին տոնել ենք, ասել է Վալլրաֆֆը՝ փոխանցելով, թե Դողան Ախանլին ուրախության հետ մեկտեղ նաեւ տխուր է՝ նոյեմբերի վերջին մահկանացուն կնքած հորն այլեւս չի կարող տեսնել, մեղավորը թուրքական արդարադատությունն է, իրավապահները։ Երեկ Ախանլին մեկնել է Թուրքիայում գտնվող հայրական գյուղ՝ ընտանիքին այցելության։**

**«Հիմա ազատ եմ, բայց մտածեք նրանց մասին, ում պատմությունները հրապարակային մեծ քննարկման չեն արժանանում», Վալլրաֆֆին ասել է Դողան Ախանլին։**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# WikiLeaks-ի հիմնադրի «դանդաղ գործողության ռումբը»



Մեծ Բրիտանիայում ձերբակալված WikiLeaks կայքի հիմնադիր եւ գլխավոր խմբագիր Ջուլիան Ասանժը սպառնացել է, որ եթե ինքը բանտարկվի, սպանվի կամ իր կայքի հետ ինչ-որ բան պատահի, ապա անհապաղ կգաղտնազերծվեն վիթխարի թվով փաստաթղթեր, որոնք կապված են ԱՄՆ-ի եւ շատ ուրիշ երկրների շահերի հետ։

Համակարգչային հմուտ փորձագետներն ասում են, որ դա նման է «դանդաղ գործողության ռումբի», որին այլեւս ոչ ոք չի կարող խանգարել։ Բանն այն է, որ էլեկտրոնային գաղտնի տեղեկությունները սովորաբար կնքում են 56 բիտանոց ծածկաբանալիով, մինչդեռ Ասանժը օգտագործում է 256 բիտանոց բանալի, եւ գաղտնազերծման համար կարող են պահանջվել շատ ու շատ տարիներ։

20 տարուց ավելի համակարգչային անվտանգության ոլորտում աշխատող Նեմու Նիգամը CNN-ի թղթակցին ասել է, որ «պայթյունը» կարող է տեղի ունենալ, հենց որ Ասանժը կամ նրա բարեկամները սեղմեն համապատասխան «կոճակը»։

Ասանժից բացի, նրա ծածկաբանալին ունեն նրա առավել վստահելի մարդիկ՝ WikiLeaks-ի անհայտ խմբագիրները։ Նրանք կարող են գտնվել որտեղ ասես։ Նիգամի կարծիքով, նրանց գտնելը փաստորեն անլուծելի խնդիր է։

Տեսականորեն նրանց գտնելը կհեշտանա աշխատանքային IP հասցեների հայտնաբերումից հետո։ Բայց այդ մարդիկ օգտագործում են պրոքսի-սերվերներ եւ այլ տեխնիկական միջոցներ, «հայտնվելով» զանազան տեղերում եւ խիստ դժվարացնելով որոնողների գործը։

Թե ինչ նյութեր կլինեն գաղտնազերծվելիք փաստաթղթերում, կարելի է միայն գուշակել։ Օրինակ, Ասանժը վերջերս «Ֆորբս» հանդեսին հայտնել էր, որ WikiLeaks-ը մտադիր է հրապարակել գաղտնի տվյալներ մի խոշոր բանկի վերաբերյալ։ Որոշ հարցազրույցներում նա պատմել էր, որ ինքը տեղեկություններ ունի ԱՄՆ-ի խոշորագույն բանկային հոլդինգային ընկերության՝ Bank of America-ի վերաբերյալ։

Ըստ երեւույթին, Ասանժը փաստաթղթեր ունի նաեւ British Petroleum նավթային խոշոր ընկերության վերաբերյալ։ Ըստ որում, բոլոր ֆայլերը «մաքուր վիճակում» են, առանց որեւէ խմբագրման, ասել է նա։

Ամեն դեպքում ավստրալացու գործընկերները պնդում են, որ նրա ձերբակալությունը չի կասեցնի գաղտնի տեղեկությունների հերթական չափաբաժնի՝ ԱՄՆ պետդեպարտամենտի, հեռագրերի հրապարակման ծրագիրը։ Թե՛ գործընկերները եւ թե՛ առհասարակ Ասանժի կողմնակիցները համոզված են, որ նրա ձերբակալությունն ունի քաղաքական աստառ։

# Մոսկվայում են նախագահը, ԱԳ եւ պաշտպանության նախարարները, ԱԱԽ քարտուղարը

Երեկ Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը, պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը եւ ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը մասնակցել են Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) արտգործնախարարների խորհրդի, պաշտպանության նախարարների խորհրդի եւ անվտանգության խորհուրդների քարտուղարների համատեղ նիստին:

Նիստի ընթացքում քննարկվել եւ հավանության են արժանացել դեկտեմբերի 10-ին կայանալիք ՀԱՊԿ խորհրդի նիստի օրակարգն ու քննարկվելիք հարցերը, որոնք միտված են կազմակերպությանը հակաճգնաժամային արձագանքման գործուն կանոնակարգերով ապահովելուն, հավաքական անվտանգության համակարգի միջոցների եւ ուժերի ձեւավորման եւ կիրառման կատարելագործմանը, ռազմարդյունաբերական ոլորտում համագործակցության հետագա ընդլայնմանը:

Քննարկվել են նաեւ ՀԱՊԿ վերջին գագաթաժողովում ընդունված որոշումների կատարման ընթացքը, այս տարվա օգոստոսին Երեւանում կայացած՝ ՀԱՊԿ անդամ պետությունների նախագահների հանդիպմանը ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացումը: ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչության հաղորդմամբ, ստորագրվել են 45 փաստաթղթեր, որոնք ներկայացվել են Հավաքական անվտանգության խորհրդի հաստատմանը:

Նույն օրը տեղի է ունեցել Անկախ պետությունների համագործակցության մասնակից երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդի հերթական նիստը, որին Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը գլխավորում էր ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը: Նիստի օրակարգը ներառում էր ԱՊՀ գործունեությանն առնչվող 14 հարցեր, այդ թվում՝ հումանիտար բնագավառում համագործակցության խթանման, անվտանգության եւ պաշտպանական քաղաքականության բնագավառներում փոխգործակցության, իրավապահ մարմինների միջեւ համագործակցության ակտիվացման, «ՄԻՐ» միջպետական հեռուստաընկերության գործունեության, ԵԱՀԿ շրջանակներում ԱՊՀ անդամ երկրների փոխգործակցության եւ մի շարք այլ հարցեր: ԱՊՀ արտգործնախարարները հավանության եմ արժանացրել դեկտեմբերի 10-ին կայանալիք ԱՊՀ գագաթաժողովի օրակարգը եւ քննարկմանն առաջարկվող հարցերը:

Հիշեցնենք, որ երեկ երեկոյան երկօրյա աշխատանքային այցով Մոսկվա է մեկնել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ մասնակցելու ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանին, ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական ընկերակցության (ԵՎՐԱԶԷՍ) միջպետական խորհրդի նիստերին:

Հ. Ա.

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՆՈՒՄ ԵՆ

# Հայաստանը հրավիրվել է մասնակցելու Կորեայում կայանալիք ցուցահանդեսներին

Ինչպես տեղեկացանք կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, վարչապետ Տիգրան Սարգսյանն երեկ ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Կորեայի



Հանրապետության դեսպան Լի Յոուն Հոյին: Հանդիպմանը ներկա է եղել նաեւ Հայաստանի Հանրապետությունում Կորեայի Հանրապետության պատվո հյուպատոս Արմեն Աբրահամյանը:

Հայաստանի վարչապետը գոհունակություն է հայտնել Երեւանի ՋԷԿ-ի համակցված ցիկլով նոր էներգաբլոկի շինարարությանը կորեական ընկերության մասնակցության, հայ-կորեական գործարար համաժողովների, սեմինարների եւ մշակութային միջոցառումների անցկացման կապակցությամբ, շնորհակալություն հայտնել Կորեայի կառավարությանը Հայաստանին տրամադրված տեխնիկական օժանդակության, ինչպես նաեւ Վ. Բրյուսովի անվան Երեւանի պետական լեզվաբանական համալսարանի կորեական լեզվի ուսումնասիրության կենտրոնին ցուցաբերված աջակցության համար: Տիգրան Սարգսյանը նշել է նաեւ, որ Հայաստանը հրավեր է ստացել մասնակցելու 2011-ին Կորեայի Հանրապետությունում կայանալիք «Buy Korea-2011» առեւտրաարդյունաբերական եւ «Seoul Food Show» սննդարդյունաբերական ցուցահանդեսներին:

Դեսպան Լի Յոուն Հոյը նշել է, որ պաշտոնավարման ընթացքում ջանք չի խնայի երկու երկրների փոխհարաբերությունների զարգացման եւ ամրապնդման համար:

Ա. Մ.

# Հայաստանի քաղաքացուն Վրաստանում դատում են առանց մեկ ապացույցի, իսկ արձագանքը՝ զրո

Դեկտեմբերի 7-ին Վրաստանի քրեական գործերով վերաքննիչ դատարանն առանց իսկ նիստ գումարելու «քննել» ու նույնն է թողել առաջին ատյանի որոշումը, որ կայացվել էր Հայաստանի քաղաքացի Արտաշես Մելքոնյանի նկատմամբ: «**Ազգը**» նոյեմբերի 4-ին հրապարակած «Վրացական արդարադատության «ծուղակ» հայաստանցիների համար» հոդվածում ներկայացրել է Մելքոնյանի գործի մանրամասները:

Հայաստանի քաղաքացի 36-ամյա Արտաշես Մելքոնյանը, Ռուսաստանում ապրող եւ աշխատող Հայաստանի շատ այլ քաղաքացիների նման, վրացական սահմանը Վերին Լարսում հատելուց հետո ձերբակալվել է: Ձերբակալվել ու արդարադատությանը որեւէ առնչություն չունեցող վրացական դատական ատյանի կողմից դատապարտվել է 2,5 տարվա ազատազրկման մի բանի համար, որ չի արել: Ընդ որում, դատավճիռ է կայացվել առանց մի փաստի, հանգամանքի, վկայի, որ հնարավոր կլիներ դնել Արտաշեսի նկատմամբ ներկայացված մեղադրանքի հիմքում:

2009 թվականի մայիսին Պյատիգորսկում ապրող եւ աշխատող Արտաշես Մելքոնյանը, իր շատ հայրենակիցների նման, ռուսաստանյան գրանցումը կրկին իրականացնելու համար Աղլերի անցակետով հատել է ռուսական սահմանը, սակայն այդպես էլ Աբխազիա չի մտել: Հայտնվելով չեզոք գոտում՝ Արտաշեսը չի անցել աբխազական կողմ, հետեւաբար չկա եւ ոչ մի կնիք, չկա վկայություն, որ նա մտել է Աբխազիա: Վրացական օրենսդրության համաձայն, Աբխազիա մուտք գործելը համարվում է «վրացական պետական սահմանի» խախտում:

Արտաշեսի պարագայում ներկայացված մեղադրանքի մասին փաստաթղթում նշվում է, թե նրա ձերբակալությունն իրականացվել է «բավարար ապացույցների հիման վրա», երբ Արտաշեսի անձնագրում աբխազական կողմի կնիք չկա: Ինչեւէ, արդեն հոկտեմբերի 25-ին մեկ դատական նիստով Թբիլիսիի առաջին ատյանի դատարանը «գործը լսում ու դատապարտում է» Արտաշեսին 2,5 տարվա ազատազրկման: «**Ազգի**» տեղեկություններով, դատական նիստի ընթացքում դատախազն Արտաշեսին առաջարկել է ազատազրկումը փոխարինել 20000 լարի (մոտ 11 հազար ԱՄՆ դոլար) տուգանքով: Միայն երեւակայել է պետք, թե ինչ ախորժակ ունի վրաց դատական իշխանությունը, երբ նման տուգանք է ներկայացնում մարդու, որը հենց էժանության համար է նախընտրել անցնել թերեւս շատերի համար անիծյալ Վերին Լարսի անցակետով, այլ ոչ թե ընտրել առավել ապահով՝ օդային ուղին:

Ինչեւէ, այս ամենով հանդերձ, իբր կայացել է վերաքննիչ բողոքի քննություն, եւ, մեր տեղեկություններով, որոշվել է ուժի մեջ թողնել առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

Սա առաջին դեպքը չէ, երբ հայերի նկատմամբ վրացական դատարանները հատուկ անգրագիտություն են դրսեւորում, սակայն այս պարագայում այդ մոտեցումը անցնում է բոլոր սահմանները, քանի որ որեւէ հիմք, ապացույց չկա Հայաստանի քաղաքացուն ազատությունից զրկելու եւ դատապարտելու համար: Ավելին, նրան զրկել են նաեւ հարազատների հետ տեսակցության հնարավորությունից, ինչը «ժողովրդավարության կղզյակ» Վրաստանի պարագայում բացարձակապես ապագա տանող իրողություն չէ:

Ցավոք, այս պարագայում էլ միակ հույսը, թե ինչ-որ բան կշտկվի այդ երկրում, Արտաշեսի հարազատները կապում են մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ՝ ինքնախաբեության մեջ չգցելով իրենք իրենց, թե իբր Հայաստանը կարող է պահանջել իր քաղաքացու հանդեպ արդար մոտեցում:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Պետք է ծանոթանան Եվրոմիության առաջարկած գործիքակազմին

Մինչ կառավարության նիստի օրակարգին անցնելը վարչապետ **Տիգրան Սարգսյանն** անդրադարձել է Եվրոմիության հետ Հայաստանի հարաբերություններին, նշելով, որ համագործակցության զգալի մեծ ներուժ կա եւ «Եվրոմիության կողմից մի մեծ գործիքակազմ, տեխնիկական ֆինանսական օժանդակություն, որից մենք այսօր արդյունավետ չենք օգտվում»: Ուստի վարչապետը, տեղեկացնելով, որ դեկտեմբերի 11-ին Երեւանի «Կոնգրես» հյուրանոցում տեղի է ունենալու գիտաժողով, որը նվիրված է լինելու Եվրոմիության հետ մեր երկրի համագործակցության խնդիրներին եւ Հայաստանին առաջարկվող գործիքակազմին, հանձնարարեց նախարարներին ապահովել իրենց տեղակալների մասնակցությունը այդ գիտաժողովին: «Ակնկալում եմ, որ նրանք կներկայացնեն հաշվետվություն ձեր նախարարությունների եւ գերատեսչությունների կտրվածքով, թե ինչպիսի գործիքներից ինչպես պետք է օգտվեն ձեր գերատեսչությունները, եւ այդ առաջարկությունները պետք է ինձ ներկայացնեն գիտաժողովից հետո»:

Ա. Մ.

# Ոսկերչական արտադրանքի ցուցահանդես Երեւանում

«Ոսկե ձմեռ 2010» մասնագիտացված ցուցահանդեսը երեկ բացվեց Երեւանում, որը կազմակերպել էին Հայաստանի ոսկերիչների միությունն ու «Պրոմ էքսպո» ընկերությունը: Ներկայացված ավելի քան 2 տասնյակ հայկական ընկերություններ ներկայացնում էին ոսկերչական, արծաթագործական իրեր, զարդեր, աքսեսուարներ, թանկարժեք քարեր, ժամացույցներ եւ այլն:

Հայաստանի ոսկերիչների միության նախագահ Էմիլ Գրիգորյանը, հանդես գալով բացման խոսքով, ներկաներին հիշեցրեց, որ այս ոլորտի առաջին ցուցահանդեսը տեղի ունեցավ 1999-ին, որից հետո 8 տարի անընդմեջ անցկացվում էին ոսկերչության արտադրանքի ցուցահանդեսներ: Վերջին երեք տարիներին տարբեր պատճառներով դրանք դադարեցին, այդ պատճառով էլ ոսկերիչների միության նախագահը այս ցուցահանդեսը ստուգողական անվանեց: Նշելով, որ ներկայացված են ոչ միայն հայտնի, այլեւ նոր ընկերություններ, նա վստահություն հայտնեց, որ ցուցահանդեսում ներկայացված նմուշները կարող են սպառվել արտաքին շուկայում: Սակայն հարկ է գտնել դրանք արտաքին շուկայում ներկայացնող եւ վաճառող: Էմիլ Գրիգորյանը հույս հայտնեց, որ եկող տարի հայկական ոսկերչական արտադրանքը կներկայացվի միջազգային ցուցահանդեսներում: Դրանցից հինգն ամենաճանաչվածներն են, որ տեղի են ունենում Մոսկվայում, Լաս Վեգասում, Հոնկոնգում, Բազելում եւ Վիչենցայում:

Ցուցահանդեսը բացվել է կառավարության շենքի նիստերի դահլիճի նախասրահում եւ գործելու է մինչեւ դեկտեմբերի 12-ը:

Ա. Մ.

# Կոտրել են Սբ Գայանե եկեղեցու դուռը. գողացել 2 գանձանակ եւ 140.000 դրամ

Ոստիկանության լրատվական ծառայության փոխանցմամբ՝ նախօրեին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Գայանե եկեղեցու վանահայրը դիմել է ոստիկանության Վաղարշապատի բաժին եւ հայտնել, որ գիշերը անհայտ անձինք մտել են եկեղեցի եւ գողություն կատարել: Մայր Աթոռի մամլո դիվան տեր Վահրամ քահանա Մելիքյանը «**Ազգի**» հետ հեռախոսազրույցում ասաց, որ տեխնիկական միջոցների գործադրմամբ գողերը բացել են եկեղեցու դուռը, մոմավաճառի դարակից գողացել 140.000 դրամ եւ 2 գանձանակ:

«Եկեղեցու տարածքը հսկող պահակ եղել է, սակայն նա չի նկատել գողերին», ասաց տեր Վահրամը՝ հավելելով, որ եկեղեցում անվտանգության համակարգ տեղադրված չէր:

Ոստիկանության համապատասխան բաժանմունքում կատարվում է նախաքննություն եւ պարզվում գանձանակներում եղած գումարի չափը:

Սա առաջին դեպքը չէ, երբ խաչագողերը գիշերով եկեղեցի են մտնում ու գողանում ոչ միայն նվիրաբերության արկղիկը, այլեւ մոմակալներ, խաչեր, զգեստ:

Նույն ճանապարհով տարբեր տարիներին թալանվել են Մարմաշենի գյուղի Սբ Գեւորգ, Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Սեւանի թերակղզու Սուրբ Առաքելոց, Սպիտակի Սուրբ Հարություն, Աշտարակի Սուրբ Գեւորգ, Բյուրականի Սուրբ Հովհաննես, Ապարանի Սուրբ Խաչ, Եղվարդի Սուրբ Աստվածածին եւ Գառնիի Սուրբ Աստվածածին եկեղեցիների նվիրաբերության արկղիկները:

2008-ին գողերը թալանել էին Ծաղկաձորի Կեչառիս եկեղեցին: Ըստ քահանաների հաշվարկների՝ գողացված նվիրաբերության երկու տուփերում եղել էր 1.5 միլիոն դրամ:

Վանաձորի Սբ Աստվածածին եկեղեցուց խաչագողերը գողացել էին 180.000 դրամ արժողությամբ խաչը, Երեւանի Կաթողիկե Սբ Աստվածածին եկեղեցուց անհետացել էր 150.000 դրամ արժողությամբ տոնական պարեգոտը:

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ **Անցուդարձ**

# 2011 թ. պետական բյուջեի նախագիծը հաստատվեց

## *Կառավարությունը կփորձի լուծել սոցիալական ուղղվածության խնդիրները*

Ազգային ժողովում երեկ շարունակվեց 2011 թ. ՀՀ պետական բյուջեի քննարկումը:

Բյուջեի նախագծի քննադատությամբ ներկայացած դաշնակցական **Արծվիկ Մինասյանը** մեղադրեց կառավարությանը հակաճգնաժամային ծրագիրը ձախողելու մեջ: «Կառավարությունը ճգնաժամից դասեր չի քաղել եւ այժմ էլ փորձում է խուսափել պատասխանատվությունից: Կառավարությունը նպաստում է մենաշնորհային տնտեսության զարգացմանը: Նրան այդ հարցում օգնում է քաղաքական մեծամասնությունը: Կառավարությունը չի խթանում փոքր եւ միջին բիզնեսի զարգացումը: Հայաստանը տնտեսական կառավարման ճգնաժամի առաջ է կանգնած», ասաց Մինասյանը՝ հայտարարելով, որ ՀՅԴ-ն դեմ է քվեարկելու բյուջեի նախագծին:

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր **Վարդան Բոստանջյանի** բնութագրմամբ՝ բյուջեն ամբողջական է, նկատելի են ֆինանսական տնտեսական ճգնաժամի հաղթահարման առաջին միտումները: ԲՀԿ-ն ողջունեց պաշտպանության ոլորտին ուղղված հատկացումների ավելացումը, կողմ քվեարկեց նախագծին, սակայն որոշակի մտահոգություններ ունի, մասնավորապես՝ տնտեսության զարգացումը, փոքր եւ միջին ձեռնարկություններին պետական աջակցության հարցը, բնակչության սոցիալական վիճակի բարելավումը:

ՀՀ ԱԺ նախագահ **Հովիկ Աբրահամյանի** մտահոգությունն էլ կապված էր ստվերային տնտեսությանն ու այն կրճատելու խնդրին:

Եզրափակիչ ելույթում վարչապետ **Տիգրան Սարգսյանն** ասաց, որ առաջարկվող փոփոխություններն ու բարեփոխումները կտան շոշափելի արդյունքներ: «2011-ի բյուջեն սոցիալական ուղղվածություն ունի, դա կստեղծի բարենպաստ միջավայր: Հարկային բեռի համաչափ բաշխում, ստվերային տնտեսության կրճատում, բիզնես միջավայրի պահպանում եւ մնացած խնդիրները կգտնվեն մեր ուշադրության կենտրոնում: Այսօր կառավարության նիստում բարեփոխումների փաթեթ է հաստատվել, որն ուղղված է բիզնես միջավայրի բարելավմանը», ասաց վարչապետը: Խորհրդարանական ընդդիմադիր երկու ուժերը՝ Դաշնակցությունն ու «Ժառանգությունը» դեմ քվեարկեցին բյուջեի նախագծին, սակայն ձայների մեծամասնությամբ՝ 80 կողմ բյուջեի նախագիծը հավանության արժանացավ:

Հ. Հ.

# Հայաստանում մենինգոկոկային մենինգիտով ավելի հաճախ հիվանդանում են երեխաները

Ամբողջ աշխարհում մենինգիտ հիվանդության հանդեպ առանձնակի հսկողություն է սահմանված: Մահացությունն այս հիվանդությունից բավականին մեծ է: Առողջապահության համաշխարհային կազմակերպության որոշումով մայիսի 19 հայտարարվել է մենինգոկոկային մենինգիտի օր: Հիվանդությունը տարածված է հատկապես աֆրիկյան երկրներում: Երեկ «Արմաս» ակումբում «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցի փոխտնօրեն **Էդուարդ Զարդարյանը** տեղեկացրեց, որ 2009-ին աֆրիկյան երկրներում գրանցվել է շուրջ 70 հազար հիվանդ՝ մենինգոկոկային մենինգիտով, նրանցից մահացել են 4800-ը: Այս տարի այդ երկրներում արձանագրվել է շուրջ 40 հազար հիվանդ, որոնցից մահացել են 2600-ը: Հայաստանի վերաբերյալ Էդուարդ Զարդարյանը նշեց, որ այստեղ մենինգոկոկային մենինգիտով երեխաներն ավելի հաճախ են հիվանդանում: Իհարկե, Հայաստանում հիվանդությունն ավելի քիչ է տարածված, մեր երկիրը ցածր վարակայնության գոտում է: Ընդհանրական խոսելով մենինգիտի մասին՝ Էդուարդ Զարդարյանը նշեց, որ այն սուր ինֆեկցիոն հիվանդություն է, որը, կախված հարուցիչի բնույթից, լինում է առաջնային ու երկրորդային: Առաջնայինն իր հերթին լինում է թարախային ու շիճային: Թարախային տեսակի հարուցիչը մանրէներն են, իսկ շիճային տեսակինը՝ վիրուսները: «Մի շարք շիճային հիվանդությունների հիմքում ընկած է տուբերկուլյոզը», ասաց Է. Զարդարյանը: Երկրորդային մենինգիտի դեպքում հիվանդի մեջ լինում է բորբոքային օջախ (օրինակ՝ լինում է ատամի կամ ականջի բորբոքում), որտեղից բորբոքումը փոխանցվում է գլխուղեղ: Մենինգոկոկային մենինգիտը ծանր հիվանդություն է: «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի նյարդաբան **Շուշան Ասատրյանի** փոխանցմամբ՝ մենինգիտն ունենում է վաղ եւ ուշ շրջանների բարդություններ: Ինչ վերաբերում է բուժման մատչելիությանը, բժիշկ Զարդարյանը տեղեկացրեց, որ առաջնային մենինգիտը բուժվում է պետպատվերով:

«**Ազգի**» հարցին, թե բնակչությունները կանխարգելման ի՞նչ միջոցներ են առաջարկում, Էդուարդ Զարդարյանը պատասխանեց. որ մեզանում թվային աճ է նկատվում, երբ նոյեմբերից մինչեւ մարտ ամիսը օդի ջերմաստիճանն իջնում է: Հիվանդանալու հավանականությունն ավելի մեծ է այնպիսի միջավայրում, որտեղ շատ մարդիկ են հավաքվում, օրինակ՝ զինվորական ստորաբաժանումներում, մանկական կոլեկտիվներում, համալսարաններում ու դպրոցներում: «Անցյալ տարի, երբ գրիպով հիվանդների աճ ունեինք, նույնն էինք ասում, որ հիվանդը պետք է լինի տանը, հաճախ լվացվի, նորմալ սնվի», ասաց բժիշկ Զարդարյանը: Կարեւոր է նաեւ հիվանդի մաքուր, հիգիենիկ պահվածքը, որպեսզի շրջապատի մարդիկ չվարակվեն նրանից:

Ի. Պ.

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

# «Ջուղայի խաչքարերը հողին են հավասարեցվել»

## *Ահազանգում է Գիտության զարգացման ամերիկյան ասոցիացիան*

**Այս մասին գիտեն բոլորը: Այս վանդալիզմի ապացույցները տեսանելի են ամենուր եւ ամենքին, պարզապես քչերն են բարձրաձայնում, ոմանք էլ միայն բարձրաձայնում են եւ վերջ: Ջուղայի միջնադարյան հայկական գերեզմանոցը՝ հարյուրավոր խաչքարերով, վաղուց արդեն գոյություն չունի. Ադրբեջանը «լիարժեքորեն տնօրինում է Նախիջեւանը»:**

**Ինչպես փոխանցում է Panorama.am-ը՝ Գիտության զարգացման ամերիկյան ասոցիացիան (AAAS), կիրառելով աշխարհատարածքային տեխնոլոգիաներ, (Geospatial Technologies), ուսումնասիրել է Նախիջեւանում գտնվող Ջուղայի հայկական միջնադարյան գերեզմանոցի՝ արբանյակից արված լուսանկարները: Ասոցիացիայի աշխատակից Սյուզան Վոլֆինբերգերը նշել է. «Արբանյակի միջոցով 2003 թ.-ին Ջուղայի գերեզմանոցում արված լուսանկարների եւ 2009-ի մայիսին արված լուսանկարների համադրությունը ցույց է տալիս, որ դեռ 2003-ին Ջուղայի գերեզմանոցում 15-16-րդ դարերի հնության հարյուրավոր խաչքարեր կային, իսկ 2009 թ.-ի լուսանկարներում դրանց մի մասն անհետացել է: Աշխարհատարածքային տեխնոլոգիաների կիրառման միջոցով արված ուսումնասիրությունները թույլ են տալիս ենթադրել, որ խաչքարերը տեղափոխվել են հողը փորող հատուկ սարքերի միջոցով, իսկ հետո հողի այդ հատվածները պարզապես հավասարեցվել են»:**

**Հիշեցնենք, որ Ջուղայի գերեզմանոցի խաչքարերի ոչնչացման վերջին դեպքն արձանագրվել է 2005-2006թթ.-ներին: Խաչքարերը ջարդել են ծանր շինարարական տեխնիկայի միջոցով, իսկ գերեզմանոցի ազատված տարածքը վերածվել է հրաձգարանի: Այս կապակցությամբ Եվրոխորհրդարանը ցանկացել է ներկայացուցչություն ուղարկել՝ ուսումնասիրելու Ջուղայի գերեզմանոցում կատարված բարբարոսությունները, սակայն Ադրբեջանի իշխանությունները կտրականապես մերժել են այս նախաձեռնությունը:**

**2003-2006 թթ. հրապարակված իր զեկույցներում Հուշարձանների եւ տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհուրդը (ICOMOS) նույնպես անդրադարձել է Ջուղայի գերեզմանոցի խաչքարերի ոչնչացման հիմնախնդրին: Հիշեցնենք նաեւ՝ ԵԱՀԿ երկրների ղեկավարների՝ Աստանայում կայացած վերջին գագաթաժողովի ընթացքում նախագահ Սարգսյանը գործընկերների առջեւ կարեւոր դիտարկումներ արեց Ջուղայի կործանված խաչքարերի վերաբերյալ:**

Հ. Ա.

# Գրքույկ ադրբեջանական վանդալիզմի մասին

**Լույս է տեսել Հայկ Դեմոյանի «Ադրբեջան. վանդալիզմ ինչպես միշտ» պատկերազարդ գրքույկն անգլերեն լեզվով: Այն հրատարակել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը պետպատվերի շրջանակում: Գրքույկն անդրադառնում է Հին Ջուղայի հայկական գերեզմանոցի բարբարոսական ոչնչացմանը: 2005 թվականի դեկտեմբերին ադրբեջանական բանակի զինվորներն ու սպաներն ամբողջությամբ ոչնչացրին Հին Ջուղայի հայկական գերեզմանոցի հազարավոր եզակի խաչքարերն ու տապանաքարերը, որոնք վանդալիստական գործողությամբ վերածվեցին խճազանգվածի ու նետվեցին Արաքս գետը: Գերեզմանոցի տարածքում ներկայումս հրաձգարան է կառուցվել: Չնայած գոյություն ունեցող լուսանկարային ու տեսագրական բազմաթիվ անհերքելի վկայություններին՝ մինչեւ այսօր որեւէ միջազգային կազմակերպություն, այդ թվում եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ն,**




**համարժեք գնահատական չի տվել Ադրբեջանի վանդալիստական գործողություններին, որոնք կազմակերպվել եւ իրագործվել են պետական մակարդակով:**

Ի. Պ.

# «Արդշինինվեստբանկն» արժանացել է MoneyGram-ի պատվոգրին

Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկից», բանկն արժանացել է MoneyGram միջազգային դրամական փոխանցումների համակարգի պատվոգրին որպես «Ամենաարդյունավետ եւ հուսալի բանկ»:

MoneyGram համակարգը աշխարհում դրամական փոխանցումների առաջատարներից է, ներկայացված է աշխարհի 191 երկրներում եւ ունի ավելի քան 205 հզ. սպասարկման կետ: «Արդշինինվեստբանկը» MoneyGram համակարգի հետ համագործակցում է բանկի կազմավորման օրվանից եւ այդ համակարգի հետ համատեղ պարբերաբար իր հաճախորդներին է առաջարկում տարբեր ակցիաներ, որոնց ընթացքում հաճախորդներին շնորհվում են տուրիստական ուղեգրեր, պլաստիկ քարտեր, բազմաթիվ նվերներ եւ դրամական պարգեւներ: Նմանատիպ հերթական ակցիան, որը գործում է բանկի բոլոր մասնաճյուղերում, մեկնարկել է 2010թ. սեպտեմբերի 1-ից եւ շարունակվելու է մինչեւ դեկտեմբերի 31-ը:

«Արդշինինվեստբանկի» վարչության նախագահ Ներսես Կարամանուկյանն այս իրադարձության առթիվ նշել է. «MoneyGram-ի պատվոգրին բանկն արժանացել է աշխատանքի արդյունավետ կազմակերպման, աշխատակիցների արհեստավարժության, հմտության եւ սպասարկման բարձր որակի շնորհիվ: Համոզված եմ, որ համագործակցությունը MoneyGram համակարգի հետ շարունակելու է մնալ արդյունավետ եւ փոխշահավետ, իսկ նմանատիպ երկրորդ մրցանակի շնորհումը էլ ավելի է պարտավորեցնում մեզ լինել հուսալի եւ վստահելի բանկ, ոչ միայն մեր արտերկրի գործընկերների, այլ նաեւ մեր բոլոր հաճախորդների համար»:

Հաղորդագրության մեջ տեղեկացվում է նաեւ, որ 2009-ի դեկտեմբերին «Արդշինինվեստբանկն» արժանացել էր MoneyGram համակարգի «Ամենահուսալի հայկական բանկ» հավաստագրին:

Ա. Մ.

# Բազմաբնակարան շենքերի 70 տոկոսը հիմնանորոգման կարիք ունի

**Թեպետ 1989-ից բնակարանային ոլորտում անընդհատ բարեփոխումներ են տեղի ունենում, օրենքներ ու օրենսդրական ակտեր են ընդունվում, սակայն վատ պահպանման պատճառով բնակարանային ֆոնդի վիճակը մասնագետները բնորոշում են վատթար:**

**Habitat for Humanity Armenia կազմակերպությունն ու «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամն ավելի քան 5 ամիս ուսումնասիրել են Հայաստանի բնակարանային ոլորտը:**

**Երեկ Ամերիկյան համալսարանի բիզնես կենտրոնում կայացած «Հայաստանի բնակարանային ոլորտի» ուսումնասիրությունների ներկայացման ժամանակ ակնհայտ դարձավ, որ խորհրդային կարգերի փլուզումից հետո անցումը շենքերի կառավարման նոր համակարգին այնքան էլ հարթ չի ընթացել, բնակարանային ոլորտում առաջացել են բազմաթիվ պրոբլեմներ:**

**«Թեպետ կառավարության ամենակարեւոր առաջնահերթությունների շարքում շարունակում է մնալ բազմաբնակարան շենքերի կառավարման եւ պահպանման ծրագրին աջակցումը՝ շենքերում կոմունալ ենթակառուցվածքների բարելավումն ու կոմունալ ծառայությունների վերահսկումը, սակայն ուսումնասիրությունները պարզել են, որ համատիրությունների միայն 20 տոկոսն է արդյունավետ գործում», «Ազգի» հետ զրույցում ասաց «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի իրավական հարցերով փորձագետ Հայաստան Ստեփանյանը:**

**Համատիրությունների ոչ արդյունավետ գործունեության պատճառներից ոլորտի մասնագետը մատնանշում է սեփականատերերի՝ ընդհանուր օգտագործման տարածքների պահպանության հոգսը կրելու պատասխանատվության բացակայությունը, ծառայությունների մատուցման վատ որակը, տեղական ինքնակառավարման մարմիններին վճարումներ չկատարելու փաստը:**

**«Կան մի քանի տասնյակ շենքեր, որտեղ բնակվելը խիստ վտանգավոր է: Դրանք կառավարությունը գնահատել է 3-րդ աստիճանի վթարային եւ բնակության համար վտանգավոր: Բազմաբնակարան շենքերի 70 տոկոսը ենթակա է կապիտալ վերանորոգման: Ջրատարներն ու կոյուղին սարսափելի վիճակում են, մուտքի դռներն ու աստիճանները նույնպես լավ վիճակում չեն: Էլ չենք խոսում, որ մի շարք ինքնակամ կառույցների հետեւանքով թուլացել են բազմաբնակարան շենքերի հիմքերը», ասաց նա:**

**Հետխորհրդային մի շարք երկրների համեմատությամբ Հայաստանը լավ վիճակում է, սակայն ընդհանուր առմամբ բնակֆոնդը չի կարելի բավարար գնահատել: Հայաստան Ստեփանյանն ընդգծում է, որ եթե անհապաղ միջոցառումներ չձեռնարկվեն, տարիներ անց բնակֆոնդի վիճակը միայն մեկ բառով կբնութագրվի՝ աղետալի:**

**Ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ բացառությամբ աղետի գոտու, հանրապետության բոլոր քաղաքներում բազմաբնակարան շենքերի պատկերը նույնն է: Համեմատաբար բարվոք վիճակում են մայրաքաղաքի Ավան համայնքի բնակարանները: Աղետալի վիճակում են հայտնվել Նուբարաշենի եւ Էրեբունիի համայնքների բազմաբնակարան շենքերը:**

**Ստեփանյանի գնահատմամբ՝ Հայաստանում բնակարանային ոլորտի վերաբերյալ իրավական դաշտը կարգավորված է. «Խնդիրը դրանց կիրառման մեջ է»: Ուսումնասիրության արդյունքներն ու հաշվետվությունը կազմակերպությունը կտրամադրի վարչապետ Տիգրան Սարգսյանին, քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանին, կադաստրի պետական կոմիտեի նախագահ Երվանդ Զախարյանին:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Մերձավորարեւելյան ուղիներ

## *Տպավորություններ ԱԺ պատվիրակության Սիրիա այցից*





90-ականներին սիրիահայ ընկերներս պատմում էին, որ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը Դամասկոսում Սիրիայի այն ժամանակվա առաջնորդ Հաֆեզ Ասադի հետ հանդիպման ընթացքում նրանից լսել է հետեւյալ հորդորը կամ խրատը. «Որդիս, միշտ պահիր մտքումդ, որ քո երկիրը պատկանում է աշխարհի ա՛յս մասի ընտանիքին»: Չգիտեմ որքանով է հավաստի կամ ճշգրիտ այս վկայությունը, սակայն համոզված եմ, որ Արաբական աշխարհի այդ իմաստուն ղեկավարը իրավացի էր. Հայաստանը որպես պետություն ու ժողովուրդ, որպես մշակույթ ու պատմություն հոգեհարազատ է եւ հատուկ առաքելություն ունի Մերձավոր Արեւելքի տարածքում՝ Իրան, Իրաք, Եգիպտոս ու Միջերկրականի արեւելյան ափի երկրներ՝ Սիրիա, Լիբանան ու Կիպրոս: Եվ տվյալ պահին այդ երկրներում հայկական գաղթօջախների առկայությունը չէ միայն որոշիչը, այլ՝ երկար դարերի ձգտումը մեր ժողովրդի՝ հարաբերվելու, նույնիսկ ծավալվելու դեպի հարավ ու հարավ-արեւմուտք: Եվ միայն երեւակայել է պետք, թե ինչպիսին կլիներ այդ «ընտանիքը», եթե միջին դարերում թուրքերը չխցկվեին այդ տարածք, եւ ինչ կլիներ, մանավանդ այսօր, եթե Թուրքիան փակած չլիներ մեր ճանապարհը դեպի մեր հարազատ միջավայր:

Ահա այս տեսակետից նաեւ պետք է դիտել Հայաստանի վերջերս աշխուժացող հարաբերությունները այդ տարածաշրջանի երկրների հետ: Եվ հենց այդ պարունակի մեջ պետք է դիտարկել նաեւ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի պաշտոնական այցը Լիբանան, Կիպրոս ու վերջերս՝ Սիրիա:

### Ելույթ՝ Սիրիայի խորհրդարանում

Ու հենց Հաֆեզ Ասադի 30 տարի առաջ Երեւանում արտասանած խոսքի մեջբերումով էլ **Հովիկ Աբրահամյանն** սկսեց իր ճառը Սիրիայի Արաբական Հանրապետության խորհրդարանի նիստում: «Շատ ուրախ եմ հյուրընկալվելու մի երկրում, ասաց նա, որը Սիրիայի երջանկահիշատակ նախագահ Հաֆեզ Ասադի խոսքերով՝ հայերի երկրորդ հայրենիքն է: Այսինքն, ես գտնվում եմ ոչ միայն բարեկամ, այլեւ հարազատ մի երկրում»: Ու երկար տարիների հայ-սիրիական կապերին հակիրճ անդրադառնալուց հետո Հ. Աբրահամյանը բնականաբար երախտագիտությամբ հիշատակեց Մեծ եղեռնից փրկված «հայու բեկորներին» սիրիական հողում ապաստան տալու, նրանց ազգային, մշակութային ու կրոնական ինքնության զարգացմանը նպաստելու իրողությունը:

Հայաստանն ու Սիրիան, ըստ Հ. Աբրահամյանի, տարածաշրջանային ծանրակշիռ գործոններ են, եւ «Հայաստանի բազմավեկտոր քաղաքական օրակարգում մերձավորարեւելյան ուղղությունն առաջնահերթություններից մեկն է», որտեղ պատահած յուրաքանչյուր «ցնցում ուղղակի կամ անուղղակի կերպով իր ազդեցությունն է ունենում նաեւ մեր տարածաշրջանի վրա», «մինչդեռ յուրաքանչյուր պետություն ձգտում է եւ ցանկանում է ապրել հարեւանների հետ հաշտ ու խաղաղ»: Եվ ահա այդ ձգտմամբ էլ, մեկ տարի առաջ, Հայաստանի նախագահը պատրաստակամություն հայտնեց Թուրքիայի հետ կարգավորելու հարաբերությունները՝ առաջարկելով առանց նախապայմանների բացել սահմանները եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Ցյուրիխում ստորագրվեցին արձանագրությունները «բարձր միջնորդություններով», որից գրեթե անմիջապես հետո, ու մինչ այդ էլ՝ քողարկված, Անկարան սկսեց նախապայմաններ առաջադրել, ինչն անընդունելի էր Հայաստանի համար: Ահա թե ինչու Հայաստանի նախագահը որոշեց ու հայտարարեց «ժամանակավորապես առկախել հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացը»: Եթե Հայաստանը, իր հոգում կրելով հանդերձ 1915 թ.-ի ցեղասպանության ցավը, համաձայնվում է նախապայմաններ չառաջադրել մինչեւ օրս էլ իրավաժառանգորդի իր մեղքը չընդունող Թուրքիային, ապա վերջինս ինքն է նախապայմաններ առաջադրում, փորձելով աջակցել Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությանը, այնինչ ԼՂ հարցի հետ Թուրքիան ոչ մի առնչություն չի ունեցել որեւիցե փաստաթղթով կամ միջազգային որեւէ ատյանում:

Բնականաբար, ԱԺ ղեկավարն անդրադարձավ նաեւ ԼՂ հարցին ու կրկնեց այդ ուղղությամբ ՀՀ պաշտոնական դիրքորոշումը՝ «Ադրբեջանը մեկընդմիշտ պետք է հասկանա, որ այսօր ժողովրդավարությամբ իրեն գերազանցող ԼՂՀ-ն երբեք չի լինի Ադրբեջանի կազմում, մանավանդ որ երբեք չի էլ եղել»:

### Պրոթուրքական դժգոհություններ եւ Realpolitik

Դահլիճի քար լռության մեջ նկատելի էր սիրիացի պատգամավորներից ոմանց դեմքի լարված ու դժգոհ արտահայտությունը: Նկատելով դա, Հ. Աբրահամյանն իր ելույթի ավարտին հարկ համարեց ավելացնել, որ թերեւս իր արտահայտությունները կարծր էին, սակայն ասվածն ամբողջովին ճշմարտություն է...

Նիստից հետո, առանձին զրույցի ժամանակ, պատգամավորներից ոմանց դժգոհության մասին ակնարկեց Սիրիայի խորհրդարանի նախագահ դոկտ. Մահմուդ ալ-Աբրաշը: Նույնիսկ ասաց, որ Հ. Աբրահամյանի մի շարք արտահայտությունները չպետք է արտասանված լինեին: ՀՀ ԱԺ նախագահին մնում էր կրկնել՝ ցավում է, որ իր բնորոշումները ոմանք դժգոհությամբ են դիմավորել, սակայն դրանից ճշմարտությունը չի փոխվում:

Հստակ է, որ Սիրիայում, ինչպես ողջ արաբական աշխարհում, պրոթուրքական տրամադրությունները, մանավանդ Իսրայելի դեմ Էրդողանի գործողություններից ու ելույթներից հետո, մակընթացության մեջ են: Առիթից օգտվելով, թուրքական քարոզչությունը, եւ վերջինիս պոչիկ ադրբեջանականը, ուժեղացել է տարածաշրջանում: Հովիկ Աբրահամյանի պատվիրակության Սիրիա այցից մի քանի օր առաջ, նոյեմբերի 17-ին, ինչպես կարդում ենք սիրիական «Ալ Զամահիր» օրաթերթի նոյեմբերի 23-ի համարի առաջին էջում, այսինքն՝ հենց հայկական պատվիրակության այցի օրերին, Իլհամ Ալիեւը հեռախոսազրույց է ունեցել նախագահ Բաշար Ասադի հետ եւ արծարծել «երկկողմանի հարաբերությունների վիճակը»... Եվ հենց նույն օրերին, հարեւան Լիբանանում պատրաստվում էին ընդունել իր «շարմը» ցուցահանող Էրդողանին՝ ի հակադրություն տեղի հայ համայնքի բացահայտ դժգոհությանը:

Այո՛, ջրային ռեսուրսների առումով Թուրքիայի ողորմածությունից կախված Սիրիան վերջին մի քանի տարիներին Realpolitik-ի քաղաքականություն է վարում Անկարայի նկատմամբ, մանավանդ որ Էրդողան-Գյուլ տանդեմը Սիրիայի եւ արաբների ոխերիմ հակառակորդ Իսրայելի նկատմամբ տարածաշրջանում տասնամյակներ տիրող քաղաքականության մեջ փոփոխությունների հայտանշաններ է ցույց տալիս:

Այսուհանդերձ դա ամենեւին չի խանգարում, որ Սիրիայի Արաբական Հանրապետության պաշտոնական քարտեզներում ներառվի 1938 թ.-ին Ֆրանսիա-Թուրքիա դավակցությամբ վերջինիս կցված Ալեքսանդրեթի շրջանը՝ Մուսա լեռան 7 գյուղերով հանդերձ, որտեղ, ավա՜ղ, այսօր ապրում է (Վաքըֆ գյուղում) ընդամենը 120 տուն հայ, իսկ բնակչության մեծ մասը ալավիներ են, այսինքն Սիրիայում իշխող ընտանիքի դավանակիցները: Այլ խոսքով՝ տարածքային պահանջ մեկ կողմից, քաղաքական-տնտեսական լավագույն հարաբերություններ՝ մյուս:

### «Արցունքով ստորագրված հուշագիր»

Բոլոր պարագաներում խորհրդարանի «միջադեպը» էական ազդեցություն չթողեց հայկական պատվիրակության այցի բարեկամական մթնոլորտի վրա, մանավանդ որ մինչ այդ ընկերական ամենաջերմ հարաբերություններ էին ստեղծվել երկու խորհրդարանների նախագահների միջեւ: Ի դեպ, Հովիկ Աբրահամյանին հաջողվում է, եւ ես դա նկատել եմ դեռեւս անցյալ տարի նրա լիբանանյան այցի ժամանակ, քաղաքական խոսակցությունները անզգալաբար տեղափոխել ընկերական-մտերմական հարթություն: Այդ հարթությունն արդեն պատրաստ էր նախորդ օրը, մեր պատվիրակության ժամանումից անմիջապես հետո, Մահմուդ ալ-Աբրաշի հետ առաջին հանդիպման ժամանակ, երբ ստորագրվեց համատեղ հուշագիր: Քաղաքավարական տոներով սկսված խոսակցությունը Հ. Աբրահամյանի անմիջականության շնորհիվ շուտով վերածվեց զգացական արտահայտությունների, որն ավելի հուզական դարձավ, երբ մեր պատվիրակության անդամներից Անահիտ Բախշյանը խոսք առնելով բացատրեց, թե ինքը որքան է անհամբեր Դամասկոսից հետո այցելել Հալեպ, տեսնել այն տունը, որտեղ ապրել են իր ծնողները Հայաստան հայրենադարձվելուց առաջ: Տիկին Անահիտը չկարողացավ զսպել իր արցունքները, մինչ թարգմանիչ Հովհաննես Աստրյանն իր պաշտոնականությունը կատարելիս՝ նույնպես փղձկեց: Ախր, նա ծնվել է հենց Սիրիայում: Ու մինչ դեսպան Արշակ Փոլադյանը շտապում էր Հովհաննեսի պարտականությունն իր վրա վերցնել, խորհրդարանի նախագահ Մահմուդ Աբրաշը, ինքն էլ Հալեպի ծնունդ, կրթված բոլոր արաբների մեջ նստած բանաստեղծի իր բնորոշումը տվեց՝ «արցունքով ստորագրված հուշագիր», ակնարկելով քիչ առաջ ստորագրված փաստաթղթին:

### Սիրիան պատրաստ է միջնորդել Հայաստանի ու Թուրքիայի միջեւ...

Այսպիսով, հայկական կողմն ասաց իր խոսքը, սիրիականը՝ իր, եւ ամեն ինչ ավարտվեց հաշտ ու հանգիստ, ինչպես վայել է արեւելքի երկու բարեկամների: Եվ հաջորդ օրն առավոտյան, նախագահական պալատում հայկական պատվիրակության ընդունելիս, այդ մասին ոչ մի ակնարկ չարեց նախագահ Բաշար Ասադը: Նա բավականացավ տարածաշրջանում տիրող իրավիճակի գնահատմամբ, ապա ներկայացրեց իրենց արտաքին քաղաքականության հիմնարար ուղղությունները:

Ռաիսի (այսպես են կոչում արաբները իրենց նախագահներին եւ առաջնորդներին) կարծիքով, Թուրքիան ցարդ այսքան հաջող կառավարություն չի ունեցել: Թուրքիայում իշխող «Բարգավաճում եւ առաջադիմություն» կուսակցությունը իսկապես ձգտում է բարեկամական հարաբերություններ հաստատել իր դրացի երկրների հետ, եւ ինքը չի կասկածում, որ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ եւ բաց սահմաններ ունենալը բխում է նրա այդ քաղաքականությունից: Պարզապես, Թուրքիայում դեռեւս չեն կարողացել տարբեր համայնքների ու կրոնների միջեւ համակեցության մթնոլորտ ստեղծել, ինչը վաղուց արդեն նվաճված կատեգորիա է Սիրիայում՝ հանդուրժողականություն եւ հարգանք միմյանց նկատմամբ: Եթե Հայաստանի իշխանությունը ցանկանա՝ Սիրիան կարող է Թուրքիայի հետ ունեցած իր կապերն օգտագործել երկու երկրների միջեւ հարաբերությունները վերսկսելու համար. սա՛ էր Սիրիայի նախագահի պատգամը, ինչի տակ պետք է հասկանալ տարածաշրջանային հարցերը հենց տարածաշրջանի ներսում՝ առանց օտար ուժերի միջամտության լուծելու Ասադյան (հայր եւ որդի) քաղաքական դավանանքը:

### Սիրիայի գլխավոր պրոբլեմը՝ ազգաբնակչության գերաճ

Ավելի ուշ հայկական պատվիրակությանն ընդունեց վարչապետ Նաջի Օտրին: Նա երկարորեն պատմեց երկրի տնտեսական ծրագրերի ու խնդիրների մասին, չմոռանալով երկրորդել Հովիկ Աբրահամյանի կարծիքը՝ Սիրիա-Հայաստան քաղաքական հարաբերություններին համարժեք բարձրության վրա չի գտնվում տնտեսականը: Վարչապետը ավելի երկար խոսեց երկրում բնակչության աճի մտահոգիչ տեմպերի մասին, որ տարեկան կազմում է շուրջ 2,8 տոկոս: Այս ընթացքով երկրի բնակչության թիվը 20 տարի հետո կկրկնապատկվի ու կհասնի 45 միլիոնի: Հարկավոր է նորանոր աշխատատեղեր ստեղծել ու հատկապես զարկ տալ գյուղատնտեսությանը, առաջին հերթին իրացնելով 182 հազար քմ տարածք ունեցող երկրի անջրդի հսկայական հողերը: Իմ տպավորությամբ, վարչապետ Օտրին մեր պատվիրակության համար հատուկ շեշտեց այս ամենը, որպեսզի հասկանալի դարձնի Թուրքիայի ջրային ռեսուրսներից (հատկապես Եփրատից) իր երկրի կախվածությունը, ուստի եւ՝ realpolitik-ը:

Իր հերթին, Հ. Աբրահամյանը շեշտակի դրեց Հայաստանի իշխանությունների ակնկալությունը սիրիական կողմից՝ ինչքան հնարավոր է շուտ դեսպանի մակարդակի բարձրացնել իրենց դիվանագիտական ներկայացուցչի կարգավիճակը Երեւանում: Այո, մեր երկրում Սիրիան ցարդ ներկայացված է հավատարմատարի մակարդակով, ինչը տարօրինակ է, իսկապես:

Ակնկալում էի, որ վարչապետն իր հերթին կհիշեցներ հայկական կողմին, որ 1997-ից ի վեր ոչ հայկական ծագում ունեցող սիրիացիները միայն հրավերով կարող են այցելել Հայաստան: Ավելի ուշ Սիրիայում մեր դեսպան Արշակ Փոլադյանն ինձ պիտի բացատրեր, որ 3-4 տարի առաջ վիզային այդ խիստ ռեժիմը հաստատվել է մի խումբ սիրիացի երիտասարդների խայտառակ պահվածքի պատճառով: Այսուամենայնիվ, տնտեսական հարաբերությունների զարգացում եւ վիզային խստացված ռեժիմ՝ անհարիր են: Գուցե հետագայում երկու երկրների վարչապետների փոխայցելությո՞ւնը լուծի այս եւ այլ խնդիրները, ուղիղ եւ գործուն շավիղի վրա դնելով մերձավոր-արեւելյան մեր ուղղությունը: Տեսնենք:

### «Նախապես մենք քրիստոնյա ենք եղել»

ԱԺ պատվիրակության այցի զուտ սիրիական մասն ավարտվեց (հայկական մասը կփորձեմ ներկայացնել առաջիկայում) Հալեպում, որտեղ գտնվում է Սիրիայի գլխավոր մուֆթի դոկտոր Բադր ադ-Դին Հասունի նստավայրը:

ԱԺ նախագահի ու նրա գլխավորած պատվիրակության պատվին գլխավոր մուֆթիի տված արաբական ոճի նախաճաշն ու դրան հաջորդած ընդունելությունը վերածվեց էկումենիզմի իսկական դասի: Խիստ զարգացած եւ հրաշալի պերճաբան՝ գլխավոր մուֆթին ասաց, թե քանի որ քրիստոնեությունը ծագում է առել սիրիական հողից, ապա իրենք նախապես քրիստոնյաներ են եղել մինչեւ մահմեդականությունն ընդունելը: Եվ միեւնույն ոգով շարունակելով ավելացրեց, որ Դամասկոսի Օմայյան մզկիթն ու Գեղարդի տաճարը (նա եղել է Հայաստանում) կառուցվել են ոչ թե փողով, այլ խորագույն հավատքով: Հիշեցրեց մի քանի տարի առաջ Ադրբեջանի մահմեդական առաջնորդ շեյխ Ալլահշուքյուր Փաշազադեի հայտարարած ջիհադը (կրոնական պատերազմ) Հայաստանի ու հայերի դեմ ու տեղեկացրեց, որ ինքն այդ առիթով նամակ է հղել Ադրբեջանի հոգեւոր առաջնորդին եւ ողջախոհության ու կրոնական հանդուրժողականության կոչ արել նրան:

Երբեւիցե տեղ կհասնի՞ այդ կոչը:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Աուտիզմով հիվանդը

*Ո՞վ է Ջուլիան Ասանժը, որը «սպանեց 100 հոգու», սակայն բանտարկվեց*

Եթե դու սպանում ես մեկ մարդու, քեզ նստեցնում են բանտ, եթե սպանում ես հարյուր հոգու, քեզ տալիս են մեծ զորավարի կոչում. Ջուլիան Ասանժին նստեցրին բանտ, ճիշտ է, դեռեւս այնքան էլ հայտնի չէ, թե ինչի՞ համար: Ինչպես ինքը՝ Ասանժն է խոստովանում, երկար ժամանակ ապրել է Շվեդիայում, իսկ 2010-ի օգոստոսին դարձել է շվեդական Aftonbladet թերթի մեկնաբան, նույն ամսին շվեդական ոստիկանությունը նրա նկատմամբ մեղադրանք ներկայացրեց երկու կնոջ բռնաբարելու հիմքով: Ասանժը հերքեց բոլոր մեղադրանքները, եւ շվեդական դատախազությունը որոշեց, որ «ավստրալացու նկատմամբ հարուցված մեղադրանքները անհիմն են»: Նույն 2010-ի նոյեմբերին, երբ Ասանժը «սպանեց հարյուր մարդու», շվեդական դատախազությունը «հանկարծ հիշեց», որ Ասանժը մեղադրվում է բռնաբարության մեջ, եւ հայտարարեց վերջինիս նկատմամբ միջազգային հետախուզում: Փաստորեն առաջ եկավ մի հարց, որն այսօր ակտիվորեն քննարկվում է միջազգային մամուլում՝ ավելի կարեւոր է ճշմարտությո՞ւնը, թե՞ այն հետեւանքը, որ թողնում է ճշմարտությունը: Մեկ այլ հարց եւս՝ ո՞րն է մեղքը մարդու, որը բացահայտել է փաստեր ԱՄՆ պետքարտուղարության պաշտոնական գրագրությունից: Ասանժը, փաստորեն, եթե նույնիսկ բռնաբարել է երկու կանանց, ապա այսօր Լոնդոնի ոստիկանությունում չի պահվում այդ պատճառով. նրա այսպես կոչված հանցանքը քաղաքական է, ու պատահական չէ, որ այս օրերին շվեդական, ամերիկյան դատախազությունների ու նաեւ ամբողջ աշխարհի ուշադրությունը կենտրոնացած է Լոնդոնի վրա. սովորական մեղադրյալներ, այդ թվում՝ սեռական բնույթի մեղադրանքներով, աշխարհում շատ կան, սակայն նրանցից ոչ մեկի մասին չեն խոսում երկրների առաջին դեմքերը: «Այդ դեմքերից» ոմանք Ասանժին կա՛մ «ահաբեկիչ» են անվանում, կա՛մ պարզապես լռում են: Ասանժի ձերբակալությունից հետո, նրան պաշտպանող հայտարարություններ չարեց անգամ հայրենի Ավստրալիայի արտգործնախարար **Քեյվին Ռադը**, որը ավստրալական ABC ռադիոկայանին նշել է. «Մենք հավաստիացնում ենք, որ որեւէ օժանդակություն չենք տրամադրի Ասանժին, ինչպես դա կանեինք մեր որեւէ այլ քաղաքացու նկատմամբ»: Եվ միայն Կրեմլը, ճիշտ է՝ «անանուն աղբյուրից», թերեւս կեսկատակ-կեսլուրջ, հայտարարեց, որ Ասանժն արժանի է Խաղաղության նոբելյան մրցանակի: Հետաքրքական իրավիճակում է Վաշինգտոնը, որը հույս ունի, թե երբ Լոնդոնի դատարանը Ասանժին կհանձնի Շվեդիային, վերջինս էլ անհապաղ կիրագործի «գրեթե Բեն Լադեն» Ասանժի փոխանցումը ԱՄՆ-ին: Վաշինգտոնը կարծես թե հասկացրել է այն մեղադրանքը, որը առաջադրելու է ավստրալացուն՝ «լրտեսություն»: Ասանժն Ավստրիալիայի քաղաքացի է, եւ ԱՄՆ-ի՝ 1917-ին ընդունած «լրտեսության մասին» օրենքի «տակ» ոչ մի կերպ չի ընկնում: Չնայած ԱՄՆ գլխավոր դատախազ Հոլդերը վստահեցրել է. «Թող ոչ ոք չմտածի, թե իր դեմքում ամեն ինչ կհաջողվի»: Իհարկե, հիշելով ՌԴ քաղաքացի Վիկտոր Բուտի օրինակը, որին Թաիլանդը հանձնեց Վաշինգտոնին, դժվար է չհամաձայնել Ամերիկայի գլխավոր դատախազի հետ: Այնպես որ Ասանժը, անկախ նրանից, որ դատապաշտպան **Սթիվենսը** պարբերաբար տեղեկացնում է, թե «իր պաշտպանյալի հետ ամեն ինչ նորմալ է», մտահոգվելու առիթ ունի, մանավանդ որ, ըստ «Լոս Անջելես թայմս»-ի, պետքարտուղարության ներկայացուցիչ **Ֆիլիպ Քրոուլին** հայտարարել է. «Մենք այժմ քննարկում ենք 250 հազար գաղտնի փաստաթղթերի արտահոսքը: Այդ փաստաթղթերը փոխանցվել են կառավարությունում անհայտ մեկից մյուսին, որը կառավարության անդամ չէ, իսկ սա Ամերիկայում համարվում է հանցագործություն» Իհարկե, Քրոուլին անտեսել է, որ «այդ մեկերից մեկը» ԱՄՆ քաղաքացի չէ:

Ինչեւէ, մինչ միջազգային քաղաքագետ-վերլուծաբանները, գործիչները, պաշտոնյաները համաշխարհային լրատվամիջոցներում քննարկում են Ասանժի, իսկ, որն ավելի կարեւոր է, WikiLeaks-ի հետագա ճակատագիրը, որի գործունեության կասեցումն անհավանական է թվում գրեթե բոլորին, եկեք փորձենք պարզել՝ ո՞վ է Ջուլիան Ասանժը, որը չնայած «սպանեց 100 հոգու», սակայն բանտարկվեց:

### Բժշկական ախտորոշում

Նա, ինչպես պնդում են առաջատար հոգեբանները, տառապում է աուտիզմով: Երբ մարդը, պատանեկության տարիներ ստացած բազմաթիվ «տրավմաների» պատճառով, հասուն տարիքում սկսում է ամեն ինչում հակադրվել աշխարհին, շրջապատին, չի ցանկանում հասկանալ ու ընդունել շրջապատը, ձուլվել հասարակության մեջ: Սովորաբար այսպիսի ախտորոշում տալիս են ահաբեկիչներին: Աուտիզմով տառապողները «հասուն երեխաներ են», որոնք կարող են ավերածություններ իրագործել, սակայն բացառապես բարի նպատակներով: Իսկ ի՞նչ է պատահել Ասանժին պատանեկության տարիներին: Երբ Ջուլիանը դարձավ մեկ տարեկան, նրա մայրն ամուսնացավ շրջիկ թատրոնի տնօրենի հետ: Ընտանիքը վարում էր «քոչվորական կյանք»: Երբ Ջուլիանն արդեն 8 տարեկան էր, մայրը, բաժանվելով թատրոնի տնօրենից, ամուսնացավ ոմն երաժշտի հետ: Նրանք ունեցան որդի, սակայն նոր ամուսինը այդ տարիների Ավստրիալիայում տարածված «Ընտանիք» աղանդի ներկայացուցիչ էր: Այս աղանդի տղամարդ անդամները պարտավոր են երեխա ունենալուց հետո նրան խլել մորից: Այս պատճառով Ասանժի պատանեկության տարիները անցել են փախուստի մեջ. մայրը անընդհատ փոխում էր բնակավայրը: Ջուլիանը 14 տարեկան էր, նրա ընտանիքն արդեն հասցրել էր փոխել 37 հասցե: Ասանժը երբեմն հաճախել է դպրոց «հերթական քաղաքում», սակայն հիմնականում սովորել է տանը, իսկ միակ ուսուցիչը եղել է մայրը: Այնուհետեւ Ջուլիանը հետաքրքրվում է գիտական գրականությամբ, համակարգիչներով եւ այլն: Ասանժը ինքնակենսագրականում գրում է. «Ես սովորել եմ ավելի քան 40 դպրոցներում եւ վեց համալսարաններում»: Ջուլիանն անգամ ընդունվում է Մելբուռնի համալսարանի մաթեմատիկայի եւ ֆիզիկայի ֆակուլտետ, դառնում «Ուսանող մաթեմատիկոսներ» միության նախագահ, սակայն Մելբուռնի համալսարանը Ասանժը չի ավարտում. «Ես չէի կարող սովորել մի համալսարանում, որը պարբերաբար գրանտներ է ստանում եւ հրահանգներ պաշտպանության նախարարությունից», հիշում է Ջուլիանը: Դեռեւս 16 տարեկանում, նա ընկերների հետ հիմնադրում է համակարգչային՝ «Ընդդեմ ատոմային մարդասպանների» կազմակերպությունը: Դեռեւս այդ տարիներից Ասանժը ձեռք է բերում նշանաբան՝ «Մի կործանիր այն համակարգը, որը կոտրում ես, մի փոխիր այնտեղից ձեռք բերած ինֆորմացիան, պարզապես՝ կիսիր այդ ամենը»: 1991-ին Ասանժը, կրկին ընկերների հետ, կոտրում է Nortel հեռահաղորդակցական ցանցը: Սակայն 1994-ին, հիմք ընդունելով, որ կազմակերպության ստացած վնասները էական չեն», դատարանը նրան ազատ է արձակում՝ նշանակելով սիմվոլիկ տուգանք: Հենց այդ տարիներին, «չկարողանալով այլեւս տանել պարբերական սթրեսները», Ասանժից հեռանում է կինը՝ տանելով երկու տարեկան երեխային: 1998-ին Ջուլիանն իրականացնում է շուրջերկրյա ճանապարհորդություն. լինում է բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Ռուսաստանում: 2006-ին նա՝ «կոռուպցիան եւ չարաշահումները բացահայտող տարբեր գաղտնի փաստաթղթեր հրապարակելու համար» հիմնադրում է WikiLeaks-ը: Սկզբնական շրջանում կայքի հիմնական ուղղությունները միջինասիական երկրներ էին, Չինաստանը, Ռուսաստանը, հետո միայն Ջուլիանն ավելի շատ ուշադրություն սկսեց դարձնել արեւմտյան կոռուպցիային: Ասանժի խումբը, ըստ հայտնի տվյալների, բաղկացած է 9 հոգուց: Ջուլիանը նախագծի իրավաբանական դեմքն է: Երբեք իրեն չի համարել «հիմնադիր». «Ես պարզապես գլխավոր խմբագիր եմ», ասում է նա:

2008-ին ամերիկյան բանակի հակահետախուզական կենտրոնի հրապարակած զեկույցում WikiLeaks-ը անվանվեց «զինվորականների համար լրջագույն վտանգ»: Նույն թվականին՝ «պետական բարձր շրջանակներում բացահայտված կոռուպցիայի համար», Քենի Ջուլիան Ասանժը պարգեւատրվեց Amnesty Internatioanl-ի մրցանակով: Երկու տարի անց Ասանժը հրապարակեց 77 գաղտնի փաստաթղթեր, որոնք «պատմում են» Աֆղանստանում ամերիկյան զորքի «արկածների» մասին: Նույն 2010-ին բրիտանական «Գարդիան» պարբերականը «համաշխարհային լրատվամիջոցների 100 ամենազդեցիկ դեմքերի» ցուցակում Ասանժի կայքը ճանաչեց 58-րդը: Այս տարվա դեկտեմբերի 7-ին Ջուլիանը իր փաստաբանի հետ ներկայացավ Սքոթլանդ-Յարդ. Շվեդիան «հանկարծ հիշեց», որ նա մեղադրվում է երկու կանանց բռնաբարության մեջ: Լոնդոնի դատարանը մերժեց Ասանժին արձակել գրավի դիմաց, հաջորդ դատական նիստը տեղի կունենա դեկտեմբերի 14-ին:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

## ԵՄ-ՌԴ. այցագրերի վերացման նախապայմաններ

**Եվրոմիությունը պատրաստ է Ռուսաստանի հետ այցագրային ռեժիմը չեղյալ հայտարարել, եթե Մոսկվան ուժեղացնի պայքարը կազմակերպված հանցավորության, ահաբեկչության եւ կաշառակերության դեմ: Այդ մասին հաղորդում է «Կոմերսանտ» թերթը: Ռուսաստանին մասնավորապես առաջարկվում է Եվրոպայի հետ համագործակցություն սկսել «առավել վճռական հակակոռուպցիոն միջոցների» ձեռնարկման նպատակով:**

**Առաջարկությունն արվում է Բրյուսելի հանդիպական ծրագրում, որտեղ նշված 4 ուղղություններով Ռուսաստանը պատրաստ է ջանքեր գործադրել Եվրոմիության երկրների հետ անայցագիր ռեժիմի հասնելու համար: Կաշառակերության եւ մյուս հանցագործությունների դեմ պայքարի ծավալումից բացի, փաստաթուղթը պահանջում է ՌԴ-ում մտցնել ինքնության ապահով վկայականներ եւ կենսաչափական անձնագրեր: Պահանջվում է նաեւ հակազդել անօրինական գաղթին եւ համագործակցել Ինտերպոլի հետ:**

**ԵՄ երկրների հետ անայցագիր ռեժիմի հասնելու համար Մոսկվան նաեւ պատրաստ է պարզեցնել ճամփորդական փաստաթղթեր ստանալու արարողակարգը:**

**ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը անցյալում քանիցս հայտարարել է ԵՄ-ՌԴ այցագրային ռեժիմը վերացնելու անհրաժեշտության մասին: ԵՄ-ում նման համաձայնագիրը համարում են հնարավոր: Մասնավորապես Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին հայտարարել է, որ դա կարող է իրականություն դառնալ 10-15 տարվա ընթացքում:**

**2010-ի հունիսին Ռուսաստանը Եվրոմիությանը փոխանցեց այցագրերի վերացման համաձայնագրի նախագծի իր տարբերակը: Անայցագիր ռեժիմի թեման դեկտեմբերի 7-ին ՌԴ-ԵՄ գագաթաժողովի գլխավոր թեմաներից մեկն էր, սակայն դրա վերաբերյալ որեւէ կոնկրետ հայտարարություն չարվեց:**

## Պանամայի ջրանցքը փակ է անձրեւների պատճառով

**Ատլանտյան եւ Խաղաղ օվկիանոսները միացնող Պանամայի ջրանցքի վարչակազմը ժամանակավորապես դադարեցրել է նավարկությունը հորդառատ անձրեւների պատճառով: BBC-ն հաղորդում է, որ սաստիկ տեղումների հետեւանքով 77 կիլոմետրանոց ջրանցքի առանձին մասերում ջրի մակարդակը հասել է կրիտիկական առավելագույն ցուցանիշներին, ինչը կարող է վտանգավոր լինել նավագնացության համար:**



**Վարչակազմի ներկայացուցիչները խոստացել են, որ կփորձեն ջրի մակարդակը կարգավորել ջրարգելակներից ջուր բաց թողնելու միջոցով եւ հնարավորինս շուտ վերականգնել նավագնացությունը:**

**Ամեն տարի ջրանցքով անցնում է մոտ 14 հազար նավ: Վերջին անգամ ջրանցքը փակվել էր 1989-ին, երբ ԱՄՆ-ը օկուպացրել էր Պանաման:**

**Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ տեղատարափ անձրեւների եւ դրանց առաջացրած հեղեղումների հետեւանքով Պանամայում արդեն զոհվել է ութ մարդ: Հարեւան Կոլումբիայում տարերքից զոհվել են 46, Վենեսուելայում՝ 35 անձինք:**

## Գուանտանամոյի փակումը հետաձգվում է

**ԱՄՆ Կոնգրեսի ստորին պալատը երեկ ընդունել է մի օրենք, որը արգելում է բյուջեից միջոցներ հատկացնել Գուանտանամոյի ռազմակայանի կալանավորներին ԱՄՆ տեղափոխելու եւ նրանց ամերիկյան տարածքում պահելու համար: Այդ մասին հաղորդում է «Վաշինգտոն թայմս» թերթը, նշելով, որ Ներկայացուցիչների պալատի անդամները փաստորեն չեն ուզում, որ այդ կալանավորների գործերը քննության առնվեն ԱՄՆ քրեական դատարաններում: Սա նաեւ նշանակում է, որ կոնգրեսականները դեմ են արտահայտվել Գուանտանամոյի բանտի փակմանը:**

**Հիշյալ օրենքի ընդունման օգտին արտահայտվել են 212, դեմ՝ 206 կոնգրեսականներ:**

**BBC-ն նշում է, որ եթե ընդունված որոշումը հավանության արժանանա նաեւ Սենատում, ապա Գուանտանամոյի կալանավորներին ԱՄՆ բանտեր տեղափոխելու նախագիծը կմնա առանց ֆինանսավորման եւ կսառեցվի առնվազն մինչեւ 2011-ի հոկտեմբեր:**

**Նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը դատապարտել է Ներկայացուցիչների պալատի ընդունած որոշումը: Մասնավորապես արդարադատության նախարարության ներկայացուցիչը հայտարարել է, թե որոշումը սահմանափակում է ենթադրյալ ահաբեկիչներին պատասխանատվության ենթարկելու ամերիկյան արդարադատության հնարավորությունները:**

**«Վաշինգտոն թայմսը» նշում է, որ կոնգրեսականների դիրքորոշումը կարող է ի չիք դարձնել Գուանտանամոյի բանտը փակելու Բարաք Օբամայի փորձերը: Գուանտանամոյի փակումը Օբամայի նախընտրական խոստումներից մեկն էր:**

# ՄՇԱԿՈՒՅԹ

## Շորժան՝ հայ նկարիչների աչքերով




«Շորժա» խորագրով ցուցահանդեսը, որ բացվեց Նկարիչների միության սրահում 2 օր առաջ, երիտասարդ նկարիչների մի խմբի մտահղացումն ու նախաձեռնությունն է՝ Սուրեն Ա. Սաֆարյան, Վահագն Գալստյան, Բարթուղ Պետրոսյան, Լեւոն Աբրահամյան, Ռոմանոս Բաբախանյան, Խաչատուր Աբրամյան, Գագիկ Սիրավյան եւ էլի մի քանի արվեստագետներ:

Թեման, թվում է, «սահմանափակում է» դիտման հետաքրքրությունը, քանի որ ընտրված բնապատկերի ժանրը Սեւանին ու Շորժային է վերաբերում միայն: (Այստեղ՝ Շորժայում, Նկարիչների ստեղծագործական տունն է նաեւ գտնվում): Սակայն հենց միայն պեյզաժային մթնոլորտը եւ առաջացրած զգացողական վիճակները բացառում են դա, քանի որ բնությունը ինքն իր հետ է, ինքնաբավ ու հրաշալի է սա, եւ հայացքդ ու միտքդ միմիայն հանգստության են մղվում: Կատարման վարպետությունն ու մոտեցումները, անշուշտ, տարբեր են, որովհետեւ նկարիչների տարբեր սերունդներ են՝ տարբեր ընկալումներով, ոճերով. գերակշռողը դասականն է, ինչը եւ բնական է: Սեւանը եւ Շորժան 100-ից ավելի կտավներում, յուրաքանչյուրի մոտ մի առանձին գույն ու պատկեր է ստացել:

Ցուցահանդեսի համադրողներից **Սուրեն Սաֆարյանը** ասում է՝ ընտրված են այն գործերը, որոնք ստեղծվել են հենց Շորժայում, այսինքն՝ բնության ներշնչումներով եւ տպավորությամբ: Նկարչի տան սրահը, ահավասիկ, Սեւանի շնչառությունն է ժամանակավորապես ստացել ու ընկղմվել ջրերի կապտավուն լռության մեջ, ալիքները, մերթ բարկ արեւին, մերթ խամրած օրերին, երբեմն խռովքի բաբախումներ ունեն, երբեմն սիրո հանդարտությամբ խոնարհ են, մերթ էլ խոնհական՝ երկնքի հետ երկխոսության մեջ ձուլված, իսկ ավելի հաճախ ճերմակ քարերի զրույցին են ունկնդիր, մեկ-մեկ էլ՝ դրանց արանքից բարալիկ փշե գլխիկը դուրս ցցած բույսի մենախոսությանը: Այս մտահղացման գեղեցկությունը հենց բնապատկերային ընտրությունն է, ուր լճի ափերը մերկ են միայն բնության հետ հարաբերությամբ եւ հմայիչ են. չկա մարդը: Մարդը բացակայում է, բացառությամբ կանացի պառկած մերկ մի մարմնի, որ իրենով արդեն խաթարում է այդ ներդաշնակությունը:

Շորժային նվիրված այս գործերը վերջին 35 տարիների հայ նկարիչների աշխատանքներ են, ամենավաղ գործը թվագրված 1939-ով, Սեդրակ Առաքելյանի «Շորժա»-ն է: Ներկա է նաեւ քանդակային արվեստը. ծովային թեմային առնչված մի շարք մանրաքանդակներ (հիմնականում մետաղե) լրացնում են ցուցադրությունը՝ հեղինակությամբ Գարեգին Դավթյանի, Գագիկ Ղազարյանի, Սերժ Մեհրաբյանի, Աշոտ Բաղդասարյանի, Արեգ Պետրոսյանի:

Ավագ եւ միջին սերնդի հայտնի նկարիչները եւ ավելի քիչ ծանոթ երիտասարդ արվեստագետներ ընդհանուր միասնական դաշտի մեջ են դիտվում՝ սկսած Սեդրակ Առաքելյանից, Սուրեն Սաֆարյանից, Վահան Խորենյանից, Էդվարդ Իսաբեկյանից, Սարգիս Մուրադյանից, Արմինե Կալենցից, Հենրիկ Սիրավյանից, Լավինյա-Բաժբեուկ Մելիքյանից, Գաբրիել Գյուրջյանից մինչեւ Ֆերդինանդ Մանուկյան, Հակոբ Հակոբյան, Ռոբերտ Էլիբեկյան, Կարեն Աղամյան, Արա Հայթայան, Նորա Հակոբյան, Արեգ Էլիբեկյան, Խաչատուր Ազիզյան, Դավիթ Սիրավյան եւ շատ ուրիշներ. աշխատանքներ՝ թվագրված 50-ականներից մինչեւ մեր օրերը՝ 2010 թվականը, ինչպես օրինակ՝ Արմեն Աթայանի «Գյուղական բակ-Շորժա»-ն, որն, ի դեպ, բավական տարբերվում է մյուսներից, թե կատարման տեխնիկայով, թե գունային լուծումներով. հիմնականում ճերմակը՝ փրփրադեզեր հիշեցնող, զարմանալիորեն նկարի մակերեսը բարկ մթնոլորտով է հագեցրել:

Ցուցադրությունը կտեւի մինչեւ դեկտեմբերի 16-ը: Ներկայացված աշխատանքները կամփոփվեն մշակույթի նախարարության հովանավորությամբ տպագրվելիք կատալոգում, որ լույս կտեսնի հաջորդ տարվա հունվարին:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## «Ընթրիք օտարների հետ»՝ Փիթեր Սուրյանի գրքի շնորհանդեսը

Ամերիկյան ժամանակակից արձակի նշանավոր դեմքերից մեկը՝ հայազգի **Փիթեր Սուրյանը**, հիմա Հայաստանում է: Օրերս Գրողների միությունում Փիթեր Սուրյանի «Ընթրիք օտարների հետ» գրքի շնորհանդեսն էր, որին հաջորդեց մամուլի ասուլիսը: Սկզբում Գրողների միության նախագահ **Լեւոն Անանյանը** խոսեց Փիթեր Սուրյանի, նրա գրական գործունեության մասին: Միացյալ Նահանգներում հանրահայտ գրող, հրապարակախոս եւ անգլերեն լեզվի ու գրականության պրոֆեսոր Փիթեր Սուրյանը նաեւ տիրապետում է ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն լեզուներին, որոնցով կատարել է երկկողմ թարգմանություններ: Սուրյանի վեպերում, պատմվածքներում եւ էսսեներում արծարծվող հիմնական թեմաներն են անցյալ-ներկա, հայրեր-որդիներ, Հայաստան-Ամերիկա, նաեւ արտոնյալներ ու ոչ արտոնյալներ փոխհարաբերությունները: «Ընթրիք օտարների հետ» գիրքը պատմվածքների ժողովածու է:




Երեկ շնորհանդեսին ներկա էին նաեւ գրքի խմբագիր Արամ Արքունը եւ գրող, թարգմանիչ Արամ Արսենյանը, որը պատմվածքների ժողովածուն անգլերենից հայերեն է թարգմանել: **Արամ Արքունը** նշեց, որ Փիթեր Սուրյանը եղել է ամերիկյան շատ կարեւոր պարբերականների թղթակիցը եւ արդեն երիտասարդ տարիքում ճանաչված է եղել որպես լավ գրող: Առանձին խոսքով նաեւ հանդես եկան գրող, հրապարակախոս **Պերճ Զեյթունցյանը**, գրող, թարգմանիչ **Կարպիս Սուրենյանը**, բանաստեղծներ **Երվանդ Պետրոսյանը**, **Արթուր Անդրանիկյանը** եւ ուրիշներ: Պերճ Զեյթունցյանը նշեց. «Ամերիկան շատ հզոր արձակ ունի, եւ դրա մեջ դիմանալու համար իսկապես պետք է մեծ շնորհք ունենալ, ինչը հաջողվել է Փիթեր Սուրյանին: Մեր բախտը բերել է, որ այդպիսի հայրենակից ունենք»: Այնուհետեւ Փիթեր Սուրյանը շատ համեստ խոսք ասաց.

«Երբ լսում էի ձեր դրվատանքի խոսքերը, շատ ազդվեցի, բայց կուզենայի ավելացնել հետեւյալը՝ մեր միջոցով կփոխանցվի ուժը այն երիտասարդ բանաստեղծների ու գրողների սերնդին, որը ոչնչացվեց Ցեղասպանության ժամանակ, եւ այդ ուժը փոխանցելը շատ դժվար պարտականություն է»:

Փիթեր Սուրյանն ու Արամ Արքունը Հայաստան են եկել դեկտեմբերի 4-ին, մեկնելու են ամսի 13-ին: Այցելության ժամանակացույցը հագեցած է, լինելու են նաեւ Լեռնային Ղարաբաղում:

Լեւոն Անանյանը տեղեկացրեց, որ Գրողների միությունը եւ կրթության ու գիտության նախարարությունը համատեղ են հրագործել Փիթեր Սուրյանի այցելությունը Հայաստան:

Ի. Պ.

## Քիմ Նազարյանը Բոստոնի «Բիհայվ» համերգասրահում

Նոյեմբերի 24-ին Բոստոնի «Բիհայվ» համերգասրահում բացառիկ ելույթով հանդես է եկել հայտնի վոկալիստ եւ երաժշտության դասատու, ինչպես նաեւ «Նյույորքյան ձայներ» մրցանակակիր խմբի հիմնադիր անդամներից եզակի տաղանդի տեր սոպրանո **Քիմ Նազարյանը**, տեղեկացնում է «Արմինյըն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը: Նրան ուղեկցել է բրազիլա-արգենտինյան «Էլ էկո տրիո» ջազային խումբը, համաշխարհային ճանաչման արժանացած Ֆերնանդո Հուերգոյի, Նանդո Միշելինի եւ Գիլերմո Նոխեչովիչի մասնակցությամբ: Ավելացնենք, որ Քիմ Նազարյանը երկու անգամ արժանացել է «Գրեմի» մրցանակի: Հ. Ծ.

## «Շուբերտի գեղեցիկ ջրաղացպանուհին» առաջին անգամ ամբողջությամբ

Գուցե դա հպարտանալու առիթ չէ, բայց փաստը մնում է փաստ. Ֆրանց Շուբերտի (1797-1828) «Գեղեցիկ ջրաղացպանուհին» վոկալ ցիկլը Երեւանում առաջին անգամ հնչեց ամբողջությամբ: Կոմպոզիտորի նշանավոր, «հանգուցային» ստեղծագործությունը կատարողական երգացանկի մեջ մտնում է միայն առանձին երգերով (ցիկլում ընդամենը կա 20 երգ): Այդ պատճառով չի վերստեղծվում ստեղծագործության ամբողջական պատկերը, որի հեղինակներն են Շուբերտը եւ նրան համահանճար քնարափիլիսոփայական բանաստեղծ Վիլհելմ Մյուլլերը, որը կոմպոզիտորի նման ապրեց երեսուն տարուց քիչ ավելի:



«Գեղեցիկ ջրաղացպանուհու» երեւանյան պրեմիերան իրականացրին **Մկրտիչ Մկրտչյանը** (բարիտոն) եւ Երեւանի կոնսերվատորիայի պրոֆեսոր **Մարգարիտ Մելիք-Ստեփանյանը** (դաշնամուր): Համերգի համար Մկրտչյանը պատրաստել էր Մյուլլերի բանաստեղծությունների սեփական հայերեն թարգմանությունը, ինչը Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի լեցուն դահլիճի ունկնդիրներին թույլ տվեց հետեւել փոխադարձ սեր չգտած ջրաղացպանի (ի դեպ, ջրաղացպան գերմաներեն՝ müller) ռոմանտիկական խոստովանանքին:

Գրական տեքստի գերազանց իմացությունը պայմանավորեց Մկրտչյանի արտաբերական մեծ արտահայտչականությանը, առանց որի Շուբերտի երաժշտությունը կկորցներ իր կարեւոր հատկանիշը: Ի տարբերություն շատ ուրիշ հայ երգիչների, Մկրտչյանը միշտ զգայունություն է հանդես բերում երաժշտության բանաստեղծական տեքստի հանդեպ. բանաստեղծի առաջին մասնագիտությունը, թերեւս, մշտապես իր մասին հիշեցնում է նրա երաժշտական պրակտիկայում:

Մկրտիչ Մկրտչյանի անունը լավ հայտնի է մեր երաժշտասեր հասարակայնությանը (նրա արտիստական կերպարը ներածական խոսքում նկարագրեց կոնսերվատորիայի պրոֆեսոր **Ժաննա Զուրաբյանը**): Ավարտելով Վ. Բրյուսովի օտար լեզուների ինստիտուտը, ապա Երեւանի կոնսերվատորիայի վոկալ ֆակուլտետը՝ Մկրտչյանը 1980-ականների վերջերից ձեւավորվում է հայ հոգեւոր երաժշտության կատարողի անդաստանում: Նա երաժիշտներից եւ երաժշտասերներից կազմավորում է արական երգչախումբ եւ 1991-ին Կամերային երաժշտության տանը իրականացնում է Մակար Եկմալյանի «Պատարագի» ամբողջական կատարումը (համերգը համընկավ այդ նշանավոր ստեղծագործության 100-ամյակին):

Ղարաբաղի պատերազմը եւ անկախ պետության կազմավորման դժվարությունները ժամանակավորապես ընդհատեցին Մկրտչյանի խմբավարական գործունեությունը, որն այդուհանդերձ 1990-ականների վերջերին կազմակերպեց «Նարեկ» արական երգչախումբը, ներառելով նաեւ մենակատարի ելույթներ: Խմբի համերգները Հայաստանում եւ արտասահմանում (լեհական Բիդգոշչ քաղաքի հնօրյա երգի փառատոնսիմպոզիումը հայկական շարականների ու տաղերի լավ վերադաշնակումներով) հաստատեցին երիտասարդ երգչի ու խմբավարի՝ հայկական հոգեւոր ժառանգության տարածման ջատագովի արժանիքները:

Իբրեւ երգիչ, Մ. Մկրտչյանը միշտ հակված էր համերգային գործունեության եւ մինչեւ 2000 թ. Փարիզ մեկնելը հայտնի էր ոչ միայն որպես Կոմիտասի՝ հայկական, այլեւ 19-րդ դարի գերմանական կամերային երաժշտության կատարող: «Գեղեցիկ ջրաղացպանուհին» ցիկլի կատարումը օրինաչափություն է, որից անկարելի էր խուսափել:

Փարիզում Մկրտչյանը երկու տարի Գրեգորյան խորալ էր ուսումնասիրում Սորբոնի համալսարանի երաժշտագիտական բաժանմունքում: Սակայն երգելու ցանկությունը նրան տարիեց Ռենն քաղաքի կոնսերվատորիայում (Ֆրանսիայի հյուսիս-արեւմուտք) շարունակել պրոֆեսիոնալ վոկալ կրթությունը օպերային երգեցողության մասնագիտության գծով: 2009-ին Մկրտչյանը սկսեց դասավանդել օպերային եւ կամերային երգեցողություն, ինչպես նաեւ խմբավարություն Վոկրեսոնի կոնսերվատորիայում (Փարիզի շրջան)՝ միաժամանակ համերգներ տալով եւ օպերային ներկայացումներում հանդես գալով (դերերգերից են Ժերմոնը, Էսկամիլիոն, Գրեմինը):

Հանրապետության առաջատար կոնցերտմայստեր Մարգարիտ Մելիք-Ստեփանյանի հետ Շուբերտի «Գեղեցիկ ջրաղացպանուհի» ցիկլի ներկայիս կատարումը դարձավ տաղանդավոր երաժշտի կատարելագործման նոր աստիճանի պերճախոս վկայությունը: Մկրտչյանի մոտ վոկալը ձեռք է բերել խստություն եւ ելրոպական զսպվածություն, իսկ տեմբրային առումով ձայնը «լուսավորվել է», ընդլայնել բարձր ռեգիստրը եւ կարծես թե ստացել թեթեւություն:

Կատարման գլխավոր գեղարվեստական արժանիքը ոճային ճշգրտությունն է, թեեւ այն զուրկ է խիստ հետեւողականությունից: Պահպանելով Lied ժողովրդական երգի ժանրի մաքրությունը՝ որպես Շուբերտի երաժշտության հիմք, Մկրտչյանը իր մեկնաբանության մեջ ցիկլի որոշ համարներ իմաստավորեց որպես նախորդում Ռ. Շումանի ռեֆլեկսիվ քնարերգության (օրինակ, հմ. 7 «Անհամբերություն», հմ. 18 «Թոշնած ծաղիկներ») եւ նույնիսկ՝ պաթետիկական վագներյան վոկալի նախորդում (հմ. 11 «Իմը»): Եվ, ինչպես նշվեց, ամբողջ ցիկլի համար մեկնաբանման ընդհանուր սկզբունք դարձավ ուշադրությունը խոսքի՝ դրա ձեւի, հնչյունաբանության, իմաստի նկատմամբ, ինչը Մկրտչյանին երբեմն տանում է չափից ավելի ասերգության (հմ. 15 «Խանդ եւ հպարտություն»): Ավելացնենք նաեւ սյուժետայնության, պատմողականության նշանակությունը (բառից դեպի երաժշտություն, գրեթե ինչպես Միջնադարում), որը երգերն ամրապնդում էր դրանց ներքին՝ մենախոսական կամ երկխոսական կառուցվածքով:

Առանձնակի դժվարություն է ներկայացնում ամբողջ ցիկլի դրամատուրգիան պայմանավորող համարների միջեւ կապերի հայտնաբերումը: Ցիկլի բաժանման գիծ սովորաբար համարվում է հմ. 12-ը («Դադար»): Մկրտչյանի մեկնաբանության մեջ գտնվել էր բաժանման ուրիշ տրամաբանություն: Ցիկլում բարձրակետային դեր կատարեցին երեք երգեր՝ հմ. 13-ը («Վինի կանաչ ժապավենով»), հմ. 16-ը («Սիրելի գույնը») եւ հմ. 20-ը («Գետակի օրորոցայինը»), որոնք ձեւավորեցին տարբեր քնարական վիճակներ...

Հնարավոր չի նկարագրել այն բոլոր զգացումները, որ արթնացնում էր կատարումը: Ներկաներին միավորում էր մոտ 200 տարի առաջ իր գլուխգործոցը ստեղծած Շուբերտի երաժշտության կենդանի, չխամրող շնչառության զգացողությունը:

ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

# Հաղթանակը ձեռք բերվեց դժվարին պայքարում, միասնական ուժերով

***Ինչպես տեղեկացրել ենք, Թուրքիայում անցկացված շախմատի համաշխարհային պատանեկան օլիմպիադայում փառահեղ նվաճման էին հասել Հայաստանի պատանի շախմատիստները, որոնք մրցաշարի ավարտից մեկ տուր առաջ նվաճել էին չեմպիոնի տիտղոսը: Եվ ահա երեկ օլիմպիադայի հերոսները հավաքականի գլխավոր մարզիչ Արսեն Եղիազարյանի հետ հյուրընկալվել էին «Հայացք» ակումբում:***




Անդրադառնալով օլիմպիադայի արդյունքներին, **Արսեն Եղիազարյանը** նկատեց, որ առաջին հայացքից ոմանց կարող է թվալ, թե հաղթանակը հեշտությամբ ձեռք բերվեց: Սակայն դա այդպես չէր: Միայն այն, որ պատանի շախմատիստներին հարկ էր լինում մեկ օրում երկու տուր անցկացնել, արդեն բավական մեծ ծանրաբեռնվածություն էր առաջացրել ու տղաներից ուժերի գերլարում էր պահանջում: Նման մրցակարգի պատճառով տուրից հետո նույնիսկ չէին հասցնում վերլուծել պարտիաները: Հազիվ վերադառնում էին հյուրանոց, սնվում, մի փոքր հանգստանում ու կրկին նստում էին խաղասեղանների շուրջը:

Եղիազարյանը նաեւ նշեց, որ սկզբում նախատեսվում էր, որ հավաքականը պետք է գլխավորի Արտաշես Մինասյանը: Սակայն հաշվի առնելով, որ թիմում ընդգրկված են Եղիազարյանի երկու սաները, նրան նշանակեցին գլխավոր մարզիչ: Մինչ օլիմպիադա մեկնելը, մեր թիմը (Գրիգորյան, Գաբուզյան, Աղասարյան եւ մեկ աղջիկ) մասնակցել էր Մոսկվայում անցկացված Դվորկովիչի մրցաշարին ու 3-րդ մրցանակակիր էր դարձել: Այնպես որ թիմի առջեւ խնդիր էր դրվել Թուրքիայում անպայման չեմպիոն հռչակվել: Ըստ մարզչի, տղաները մեծ պատասխանատվություն դրսեւորեցին, ներդրեցին բոլոր ուժերը եւ հոյակապ խաղ ցուցադրեցին: Քանի որ օլիմպիադայի հաղթողը որոշվում էր բոլոր պարտիաներում վաստակած միավորների ընդհանուր քանակով, ապա անհրաժեշտ էր մրցակիցներին հաղթել հնարավորինս խոշոր հաշվով:

Եղիազարյանը կարեւորեց հատկապես Ռուսաստանի հավաքականի նկատմամբ տոնած հաղթանակը, որը լրացուցիչ լիցք հաղորդեց տղաներին եւ վկայեց, որ կարող են չեմպիոն դառնալ: Ինչ-որ չափով նաեւ մարզական բախտի գործոնն էր կարեւոր: Օրինակ, պորտուգալացիների հետ մրցախաղը կարող էր նաեւ ոչ-ոքի ավարտ ունենալ: Սակայն մեր տղաները վերջնախաղում իրենց փորձի եւ հմտության հաշվին առավելության հասան մրցակիցների նկատմամբ եւ ի վերջո հաղթեցին 4-0 հաշվով:

Գլխավոր մարզիչը նաեւ նշեց, որ մրցաշարը լավ էր կազմակերպված: Թիմին օգնեց նաեւ Ռոբերտ Աղասարյանի հայրը, որը մասնագիտությամբ բժիշկ է եւ հավաքականի հետ Թուրքիայում էր: Կարեւոր էր նաեւ 5-րդ պահեստային խաղացողի (Տիգրան Պետրոսյան) առկայությունը թիմում, թեեւ նրա սնվելու եւ գիշերելու ծախսերը Հայաստանի շախմատի ֆեդերացիայի վրա էին:

Ասուլիսի ընթացքում մրցաշարի մասին իրենց կարծիքները ներկայացրին նաեւ պատանի շախմատիստները:

**Հովհաննես Գաբուզյան** - Շատ ուրախ եմ, որ Թուրքիայում նվաճեցինք չեմպիոնի կոչումը: Մենք լավ էինք նախապատրաստվել մրցումներին, կայուն խաղ ցուցադրեցինք, թույլ տեղեր չունեինք, բոլոր խաղատախտակների վրա էլ հավասարազոր շախմատիստներ էին խաղում:

**Դավիթ Շահինյան** - Մրցումներից առաջ մեկշաբաթյա մարզումների ընթացքում զգացինք, որ կարող ենք հավակնել օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսին: Շատ կարեւոր էր Ռուսաստանի հավաքականի նկատմամբ հաղթանակը, որից հետո 1-ին տեղը գրավելու լուրջ հայս ներկայացրինք:

**Կարեն Գրիգորյան** - Երբ ռուսներին հաղթեցինք, ավելի ոգեւորվեցինք ու զգացինք, որ կարող ենք ոսկե մեդալների արժանանալ: Կարեւորում եմ նաեւ 6-րդ տուրում թուրքերի նկատմամբ տոնած վստահ հաղթանակը 3,5-0,5 հաշվով, որից հետո ավելի իրական դարձան չեմպիոն դառնալու մեր հնարավորությունները:

**Ռոբերտ Աղասարյան** - Մեր թիմի ուժը մեր միասնականության մեջ է, իրար լավ ենք ճանաչում, ընկերություն ենք անում: Երբ ռուսներին հաղթեցինք, ավելի ոգեւորվեցինք, մանավանդ որ լրատվամիջոցներն էլ արդեն ավելի մեծ ուշադրություն էին դարձնում մեր թիմին: Բացի այդ էլ, Թուրքիայում առանձին տրամադրվածությամբ էինք խաղում: Իսկ երբ փակման արարողության ժամանակ հնչեց Հայաստանի օրհներգն ու բարձրացվեց եռագույնը, բոլորը կանգնած մեզ ծափահարում էին, հպարտության զգացումով էինք լցվել:

**Տիգրան Պետրոսյան** - Շատերին երեւի թվացել է, որ հաղթանակը հեշտությամբ ձեռք բերվեց: Սակայն դա այդպես չէ: Ընդհակառակը, մրցակիցներն աշխատում էին մեր դեմ ավելի կենտրոնացված խաղալ: Իսկ դա ստիպում էր մեզ ուշադիր լինել ու չթուլացնել տեմպը:

Արսեն Եղիազարյանը հիշեցրեց, որ պատանեկան համաշխարհային օլիմպիադաներում Հայաստանի հավաքականն առաջին լուրջ հաջողության հասել է 1998-ին, երբ չեմպիոններ են հռչակվել Լեւոն Արոնյանը, Գաբրիել Սարգսյանը, Վարուժան Հակոբյանն ու Տիգրան Պետրոսյանը: Հետաքրքրական է, որ այդ հաջողությունից 10 տարի անց, Լեւոն Արոնյանը, Գաբրիել Սարգսյանն ու Տիգրան Պետրոսյանը Հայաստանի մեծահասակների հավաքականի կազմում Դրեզդենում համաշխարհային օլիմպիադայի չեմպիոններ հռչակվեցին, իսկ Վարուժան Հակոբյանը ԱՄՆ-ի ընտրանու կազմում 3-րդ մրցանակակիր դարձավ: Իհարկե, դժվար է կանխագուշակել ներկայիս պատանեկան հավաքականի անդամների ապագան, սակայն մարզիչը համոզված է, որ եթե նրանք շարունակեն լրջորեն զբաղվել շախմատով, ապա բարձրակարգ շախմատիստներ կդառնան: Ի դեպ, հավաքականի այս կազմից հաջորդ տարի կայանալիք շախմատի պատանեկան օլիմպիադային կարող են մասնակցել միայն Հովհաննես Գաբուզյանն ու Կարեն Գրիգորյանը: Արսեն Եղիազարյանը մի փոքր մտավախություն հայտնեց հերթափոխի հարցում, թեեւ կան խոստումնալից պատանի շախմատիստներ: Նշենք, որ անցյալ տարի մեր պատանիները օլիմպիադայում 3-րդ տեղն էին գրավել: Ներկայիս կազմից մասնակցում էին Ռոբերտ Աղասարյանն ու Տիգրան Պետրոսյանը:

# Աբրահամ Խաշմանյանը կգլխավորի «Գանձասարը»

**Armsport.am-ի տեղեկացմամբ հաջորդ մրցաշրջանում Կապանի «Գանձասարը» կգլխավորի Աբրահամ Խաշմանյանը: Երեւանի «Արարատի» նախկին կիսապաշտպանը թեեւ երիտասարդ տարիքին, արդեն մարզչական աշխատանքի զգալի փորձ ունի: Նա մարզչական A կարգի արտոնագիր ունի: Ընթացիկ առաջնության մեկնարկում Աբրահամ Խաշմանյանը մարզում էր «Կիլիկիան», որը գլխավորել էր նախորդ մրցաշրջանում եւ բավական մարտունակ կոլեկտիվ էր կազմավորել: Առաջնությունը «Կիլիկիան» շատ հաջող էր սկսել՝ միեւնույն 3-1 հաշվով պարտության մատնելով «Գանձասարին» ու «Շիրակին»: Հետո հետեւեցին 2 պարտություններն ու Աբրահամ Խաշմանյանը հեռացավ թիմից:**

**Ինչ վերաբերում է «Գանձասարին», ապա թիմն անհաջող խաղաց առաջնությունում՝ զբաղեցնելով 6-րդ տեղը, որն ամենացածր արդյունքն է կապանցիների պատմությունում: Առաջնության մեկնարկում «Գանձասարը» գլխավորում էր Սլավա Գաբրիելյանը, որին փոխարինած Ալբերտ Սարգսյանին էլ չհաջողվեց կայունացնել թիմի խաղը: Ֆուտբոլասերներին հիշեցնենք, որ Աբրահամ Խաշմանյանը ժամանակին աշխատել է «Գանձասարում»: Նա թիմի գլխավոր մարզիչ Սուրեն Բարսեղյանի օգնականն էր, որի հեռանալուց հետո ղեկավարում էր ֆուտբոլիստների գործողությունները:**



# Կառլսենը մեկնարկեց պարտությամբ

**Լոնդոնում մեկնարկել է շախմատի միջազգային մրցաշար, որը ՖԻԴԵ-ի 21-րդ կարգի է: Մրցանակային ընդհանուր հիմնադրամը 145 հազար եվրո է, որից 50 հազարը կստանա հաղթողը, 25 հազարը՝ 2-րդ, 15 հազարը՝ 3-րդ մրցանակակիրը: Բացի այդ, 1000 եվրո մրցանակ կհանձնվի յուրաքանչյուր տուրում լավագույն պարտիայի հեղինակին: Հաղթանակը գնահատվում է 3 միավոր, ոչ-ոքին՝ 1: Մրցաշարն անհաջող սկսեց նորվեգացի Մագնուս Կառլսենը, որը սեւերով պարտվեց անգլիացի Լյուկ Մակշեյնին: Իսկ ահա Վլադիմիր Կրամնիկը Նայջըլ Շորթի նկատմամբ տոնած հաղթանակով մեկնարկեց: Տուրը հաջող էր նաեւ Մայքլ Ադամսի համար, որը պարտության մատնեց Դեւիդ Հաուելին: Միակ ոչ-ոքին գրանցվեց Վիշվանաթան Անանդի եւ Հիկարու Նակամուրայի մրցավեճում:**

**2-րդ տուրում կկայանան Շորթ-Մակշեյն, Կառլսեն-Ադամս, Հաուել-Անանդ, Կրամնիկ-Նակամուրա պարտիաները:**

# Մեդալ նվաճել չհաջողվեց

**Բրազիլահայ շախմատիստ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանին չհաջողվեց դառնալ այդ երկրի շախմատի առաջնության մրցանակակիր: Ավարտական տուրում հաշտություն կնքելով Պաուլո Ջասոբայի հետ, Մխիթարյանը վաստակեց 6,5 միավոր ու զբաղեցրեց 5-րդ տեղը:**

**Հետաքրքրական է, որ 11-րդ տուրի բոլոր 6 հանդիպումներն էլ խաղաղ ելք ունեցան: Չեմպիոնի տիտղոսը ժամկետից շուտ նվաճած Ջովանի Վեսկովին հաշտություն կնքեց Ջիլբերտո Միլոշի հետ ու վաստակեց 8,5 միավոր: 7 միավորով 2-րդ տեղը գրավեց Դիեգո Դի Բեռարդինոն, որի մրցակիցը Ռաֆայել Լեյթաոն էր: Բրոնզե մրցանակակիր դարձավ 7 միավոր վաստակած Էվերալդո Մացուրան, որը միայն լրացուցիչ գործակիցներով զիջեց Բեռարդինոյին:**

# 16 ուժեղագույնները կշարունակեն պայքարը

Ութ հանդիպումներով ավարտվեց չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարը: Վերջինը 1/8 եզրափակիչի ուղեգիր նվաճեց իտալական «Ռոման»՝ հյուրընկալվելիս ոչ-ոքի (1-1) ավարտելով հանդիպումը ՉՖՌ-ի հետ: Ընդ որում ռումինացիները պարտությունից խուսափեցին խաղավարտից 2 րոպե առաջ: Իսկ E խմբում 1-ին տեղը գրավեց Մյունխենի «Բավարիան», որը սեփական հարկի տակ 3-0 հաշվով ջախջախեց շվեյցարական «Բազելին»:

F խմբում կայացած «Ժիլինա»-«Սպարտակ» խաղը հայտնվել էր դադարեցման վտանգի առջեւ: Մեղավորը Մոսկվայի «Սպարտակի» ֆանատներն էին, որոնք որոշել էին բողոքի ակցիա կազմակերպել մի քանի օր առաջ թիմի երկրպագու Եգոր Սվիրիդովի Մոսկվայում տեղի ունեցած սպանության դեմ: Սլովակիայի մարզադաշտում կայացած այդ խաղի հենց մեկնարկից «Սպարտակի» ֆանատները սկսեցին ճայթռուկներ նետել խաղադաշտ: Մրցավարը ստիպված էր դադարեցնել հանդիպումը մոտ 20 րոպեով, որի ընթացքում «Սպարտակի» ֆուտբոլիստներն ու մարզչական կազմը դիմելով իրենց երկրպագուներին, խնդրում էին դադարեցնել անկարգությունները: Ընդհանուր ջանքերով հաջողվեց խաղը շարունակել, որում սպարտակցիները հաղթեցին 2-1 հաշվով: Այդ հաղթանակն այլեւս ոչինչ չէր վճռում: Թիմը գարնանը մեկնարկելու է Եվրոպայի լիգայի մրցաշարում:

Մեծ հաջողության հասավ Դոնեցկի «Շախտյորը», որն իր պատմության մեջ առաջին անգամ մտավ չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչ: Այդ հաջողությունում իր ներդրումն ունի նաեւ Հենրիխ Մխիթարյանը, որը «Բրագայի» հետ խաղի 2-րդ կեսում փոխարինման մտավ: «Շախտյորը» հաղթեց 2-0 հաշվով եւ վաստակելով 15 միավոր, H խմբում գրավեց 1-ին տեղը: Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

**Միրչա Լուչեսկու («Շախտյոր»)** - Շատ կարեւոր է, որ հաղթեցինք ու խմբում 1-ին տեղը գրավեցինք: Վերջին շրջանում թիմը մեծ առաջընթաց է ապրել: 2 տարի առաջ թիմը նվաճեց ՈւԵՖԱ-ի գավաթը, որից հետո ավելի է ուժեղացել: Գոհ եմ արդյունքից: Ինչպես «Կոպենհագենն» է ցանկանում 1/8 եզրափակիչում հանդիպել մեր հետ, այնպես էլ մենք՝ հաշվի առնելով, որ երկու երկրների առաջնություններն էլ վերսկսվում են մարտին: Իսկ ավելի հավանական է, որ մեզ բաժին հասնի իտալական ակումբ:

**Դոմինգուշ Պասիենսիա («Բրագա»)** - Մինչեւ բաց թողած գոլը լավ էինք խաղում, կարողանում էինք մամլիչ գործողություններ կիրառել մրցակցի հանդեպ: Առաջին խաղակեսում դանդաղ էինք խաղում, որի պատճառով գրոհները չէին ստացվում: 2-րդ խաղակեսում 2 գոլ բաց թողեցինք կենտրոնացման թուլացման պատճառով: Շնորհավորում եմ սաներիս: Առաջին անգամ հանդես գալով չեմպիոնների լիգայում, նրանք 9 միավոր վաստակեցին, սակայն դա բավարար չէր հաջորդ փուլ մտնելու համար: Հուսով եմ, որ Եվրոպայի լիգայի խաղերին էլ ֆուտբոլիստները նույնպիսի պատասխանատվությամբ կմոտենան:

Լոնդոնի «Արսենալը», որ շատ տպավորիչ էր մեկնարկել, H խմբում 2-րդ տեղը գրավեց՝ 3 միավորով հետ մնալով «Շախտյորից»: Ավարտական խաղում Արսեն Վենգերի սաները 3-1 հաշվով հաղթեցին «Պարտիզանին»:

G խմբում Մադրիդի «Ռեալը» 4-0 հաշվով ջախջախեց «Օսերին»: Հեթ տրիկի հեղինակ դարձավ Քարիմ Բենզեման: Ցավոք, ծանր վնասվածք ստացավ «Ռեալի» դարպասը պաշտպանած Եժի Դուդեկը: «Ռեալը» վաստակեց 16 միավոր: 2-րդ տեղը գրաված «Միլանը» առաջատարին զիջեց 8 միավորով: Իտալական ակումբը սեփական դաշտում 0-2 հաշվով զիջեց «Այաքսին», որը կշարունակի պայքարը Եվրոպայի լիգայի մրցաշարում:

F խմբում հաղթողը Լոնդոնի «Չելսին» է, որը թեեւ Մարսելում 0-1 հաշվով զիջեց տեղի համանուն թիմին, սակայն պահպանեց առաջատարի դիրքը:

Եվ այսպես, հայտնի դարձան 1/8 եզրափակիչի բոլոր 16 մասնակիցները, որոնք իրենց անհատական վարկանիշով վիճակահանությունից առաջ բաժանվել են 2 խմբի: Առաջինում ընդգրկվել են «Տոտենհեմը», «Շալկե-04»-ը, «Մանչեսթր Յունայթեդը», «Բարսելոնը», «Բավարիան», «Չելսին», «Ռեալը» եւ «Շախտյորը»: 2-րդում ընդգրկվել են խմբերում 2-րդ տեղերը զբաղեցրած թիմերը՝ «Ինտերը», «Լիոնը», «Վալենսիան», «Կոպենհագենը», «Ռոման», «Մարսելը», «Միլանը» եւ «Արսենալը»:

Վիճակահանությունը տեղի կունենա դեկտեմբերի 17-ին: Ընդ որում զույգեր չեն կարող կազմել միեւնույն երկրի եւ նույն խմբում հանդես եկած ակումբները:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

ՏԵՍԱԿԵՏ

## Տեսակի խնդիր է. սա տեսակների պատերազմ է

WikiLeaks-ը ցնցեց աշխարհը, բայց Երեւանի քաղաքապետի ու դրան հաջորդած պաշտոնանկությունները գոնե մեր, առանձին վերցրած, երկրում մթագնեցին «համաշխարհային դիվանագիտության երկրաշարժի» հետեւանքները:

Եվ, այնուամենայնիվ, ո՞րն էր Գագիկ Բեգլարյանի արարքի իրական պատճառը: Առիթը, պարզ է. «Ո՞վ է Արամ Կանդայանը, որ իմ կնոջը մասնացույց անի՝ ուր նստել»: Իսկ ո՞րն է պատճառը: Կարծիքները բազմաթիվ են, հաճախ՝ իրարամերժ: Ապտակ Սերժ Սարգսյանին, ինքնահաստատման անհաջող փորձ, կնոջ թասիբին կանգնող լավ տղու կերպարի PR, եւ այլն, եւ այդպես շարունակ: Բայց բոլոր այս ձեւակերպումներում բացակայում է ինչ-որ մի հիմնարար էություն, հարցի կվինտէսենցիան, եթե կուզեք:

Սրանք բոլորն էլ տեղի ունեն, բայց ընդամենը ածանցյալ են հիմնականից, բաժանարարից: Իսկ բաժանարարն, ըստ էության, պետք է որոնել, թերեւս, ենթագիտակցականի տիրույթում: Քանզի ակնհայտ է, որ իր պաշտոնական պարտականությունները կատարող չինովնիկին դաժանորեն չեն ծեծում միայն նրա համար, որ նա կատարել է իր պարտականությունները:

Պատճառը, որքան էլ տարօրինակ թվա, պետք է որոնել հենց նույն հարցի պատասխանի մեջ՝ ո՞վ է Արամ Կանդայանը:

Արամ Կանդայանը բնիկ երեւանցի է, երեւանյան էլիտայի տոհմիկ ներկայացուցիչ: Նրա հայրը (եւ այդ մասին շատ լավ գիտեր պրն Բեգլարյանը) երկար տարիներ գլխավորել է Մյասնիկյանի շրջգործկոմը (այսօրվա պատկերացումներով՝ Կենտրոնի թաղապետարանը): Նրա մասին ասում էին՝ մտավորական, հիանալի տնտեսվար եւ տաղանդավոր կազմակերպիչ, իսկական հայրենասեր ու իր քաղաքի նվիրյալ... Մեր մայրաքաղաքի համար նա արել է այն, ինչի մասին Գագիկ Բեգլարյանը երազել միայն կարող էր:

Գագիկ Բեգլարյանն ատում էր մարդկանց այդ տեսակը, քանզի ինքն այդպիսին չէ: Այսօրվա մեր քաղաքական էլիտայում այդպիսիք քիչ կան: Հետանկախացման տարիների քաոսն արմատախիլ արեց այդ տեսակը մեր քաղաքական երկնակամարում: Առաջացած վակուումը լցրեցին հեղափոխության ալիքի վրա բարձրացած շարիկովները: Նրանք էլ, թեկուզ ժամանակավորապես, բայց իրենց տեր հռչակեցին երկրին:

Ու բոլորովին էլ պատահական չէ, որ իրենց հարցերը նրանք լուծում են միայն բռունցքների օգնությամբ: Իրենց մտավոր ունակությունների բերումով հարցեր լուծելու այլ եղանակների նրանք ուղղակի չեն տիրապետում:

Դաժան ծեծն այս պարագայում ընդամենը ինքնապաշտպանական բնազդ էր: Ծեծելով Կանդայանին՝ Բեգլարյանը տասնամյակներով կուտակված իր «մուռն» էր հանում երդվյալ դասակարգային թշնամիներից՝ ենթագիտակցորեն իր տեղն ամրապնդելով այս արեւի տակ: Քանզի, դարձյալ ենթագիտակցաբար, սարսափում է մարդկանց այդ տեսակից, որովհետեւ հասկանում է, որ երբ այդ տեսակը նորից բարձրանա (իսկ որ վաղ թե ուշ բարձրանալու է, հուսով եմ), իր կարապի երգը երգված կլինի:

Այնպես որ, Կանդայանի ծեծով սկիզբ առած գործընթացն ընդամենը տեսակների պատերազմ է: Այն սկսվել է հեռավոր 90-ականների սկզբին ու փոփոխական հաջողությամբ դեռ շարունակվում է: Ինչ-որ պահի շարիկովները կարողացան հաղթանակ արձանագրել: Բայց դա ընդամենը պահ է, որ, հուսանք, շուտով կանցնի, ու անվերադարձ...

**ԱՐԱՔՍՅԱ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ**

## Ի՞նչ կա պաշտոնանկությունների տակ

*1-ին էջից*

Գուցե ուժը չի՞ պատել պատժելու, չէ՞ որ մերոնք ոչ թե ըստ պաշտոնի են լիազորություն բանեցնում, այլ ըստ այն պարագայի, թե իրենք ո՞ւմ մարդն են եւ ո՞ւմ մարդուն են իրենք պատժելու: Միհրան Պողոսյանն ապտակել ու վիրավորանք է հասցրել (ո՞ւմ՝ դա երեւի թե անկարեւոր չէ)՝ վարչապետի խոսքից կարելի է ենթադրել, որ այդպիսի՝ կառավարության ծրագրի մեջ չներառված ընթացքի համար է տվյալ պաշտոնյան պատժվել, քանի որ նրա ենթական խաթարել է հանրության՝ իշխանության հանդեպ ունեցած վստահությունը: Իսկ կարծեմ տվյալ պաշտոնյայի՝ ԴԱՀԿ ծառայության պետի անվան շուրջը սկանդալի պակաս երբեք չի եղել, սակայն նաեւ չենք լսել, որ մինչեւ այժմ նա պատժված լինի: Թե իրականում ի՞նչ կա այս բոլորի տակ՝ լրագրողները փորձում են ինքնուրույն գլուխ հանել: Արդարադատության նախարարը, համենայն դեպս՝ ըստ իր կայքի, նաեւ չեղյալ էր համարել ԴԱՀԿ անձնակազմի կառավարման բաժնի պետ, արդարադատության գնդապետ Ռուբեն Միրաքյանին նույն աշխատանքի մեջ վերականգնելու հրամանը. հենց այդ մարդուն էր աշխատանքից մեկ ամիս առաջ ազատել ու դեռ ազատելուց առաջ էլ ծեծել Միհրան Պողոսյանը, որի համար էլ երեւի նկատողություն է ստացել Գեւորգ Դանիելյանից: Մի կողմ թողնենք այն պարագան, թե իսկապես ինչպիսի՞ նախարար է Գեւորգ Դանիելյանը՝ դա կարելի է անել նրա աշխատանքի այս եռամյա շրջանը գնահատելով, իսկ լրագրողները՝ ամենօրյա շփումներով: Բայց նախարարի աշխատանքի գնահատական առայժմ չի եղել, գոնե հասարակության տեղեկացվածության մակարդակով:

Ի՞նչ է պատահել, ուրեմն, մեր երկրի ղեկավարներին, գուցե նրանք վերջապես որոշել են պաշտոնյաներին ցույց տալ իրենց իսկական տեղը, գուցե մեկ օր առաջ հրաժարականի դիմում գրած Գագիկ Բեգլարյանի եւ երեկ ազատված Գեւորգ Դանիելյանի օրինակները հենց այն բանի համար են, որ տնավարություն եւ օրենքից հաճախ հեռու պահվածք դրսեւորող մեր պաշտոնյաները ինչ-որ մի պահից հասկանան, որ այլեւս նման պահվածքը նրանց չի՞ ներվելու, սրանից հետո ձգեն իրենց պնդօղակներն ու անցնեն իսկապես իրավաչափ պահվածքի՞: Չէ՞ որ դա ինչ-որ պահի պետք է տեղի ունենար: Չէ՞ որ մեր պաշտոնյաների զգալի մասը առանձնապես չի փայլում ոչ բարձր պրոֆեսիոնալիզմով, ոչ օրենքի առաջ մյուս՝ հասարակ քաղաքացիներին հավասար պատասխանատու զգալու հասկանիշով եւ ոչ էլ իրենց պարտականությունները առանց չինովնիկական ծեքծեքումների կատարելով: Գուցե երկրի նախագահը վերջապես որոշել է թերացողներին եւ իրենց հասարակությունից վեր դնողներին իրենց տեղը ցույց տալ եւ այս երկու օրինակներում դրա առիթը բարեպատեհ մատուցվե՞լ է:

Բեգլարյանին եւ Դանիելյանին այլ աշխատանք երեւի կառաջարկվի: Նրանց ՀՀԿ-ից հեռացնելու հարց օրակարգում չկա, համենայն դեպս այդպես էին ասում ՀՀԿ ղեկավար շերտի ներկայացուցիչներ Գալուստ Սահակյանն ու Էդուարդ Շարմազանովը. «Կարծում եմ՝ Գագիկ Բեգլարյանը բավականին լավ աշխատեց, շատ նորույթներ մտցրեց քաղաքի կյանքում, քաղաքն ավելի տրամադրված դարձավ»: «Իսկ Գեւորգ Դանիելյանը բավականին լուրջ գիտնական է, տիրապետում է իր մասնագիտությանը, բանիմաց անձնավորություն է»: Այս երկու բնորոշումն էլ այս մարդկանց կուսակից, ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանինն է, բայց ըստ նրա՝ «մենք պետություն ենք եւ պետք է գործենք «ցիվիլ» պետության գործելակերպով», այսինքն՝ երկուսի հեռացման համար էլ պատճառ կա՝ առաջինի հրաժարականի պատճառը միջադեպն է, երկրորդինը՝ աշխատանքը ոչ պատշաճ կատարելը: «Այլ պաշտոնանկություններ եւս սպասվո՞ւմ են»: **«Ազգի»** այս հարցին Գ. Սահակյանը ոչ միանշանակ պատասխան տվեց. «Չեմ կարծում՝ սպասենք մյուս տարվան»:

Այս բոլորի մեջ տխուրն այն է, որ, այնուամենայնիվ, երկու պաշտոնանկություններն էլ մի տեսակ իրավական բովանդակությամբ այնքան էլ հագեցած չեն, հեռու են իրավական տառից եւ ոգուց: Մեկը ծեծում է մյուսին, երրորդը նրան հրաժարական տալու է մղում, եւ ոչ ոք չի ուզում կամ ժամանակ չունի գոնե մեկ անգամ այս գործընթացները իրավական ընթացակարգերով տանել՝ ի տես հասարակության. Միհրանը մարդ է ծեծել կամ անօրինական ազատել՝ դատական գործընթաց թող սկսվի, մարդուն դատարանով վերականգնեն աշխատանքում, ծեծելու համար էլ բարոյական եւ նյութական փոխհատուցման կամ դատապարտման դատավճիռ լինի: Նույնը կարելի է ասել մեկ օր առաջ հրաժարական տված քաղաքապետի պարագայում: Թե չէ՝ այս բոլորը հանգիստ կարելի է դիտել զուտ որպես մարդկային-զգացական տիրույթում կատարվող տարերային ընթացք՝ հետեւանքը պատճառին համարժեք, որն ունի իր սեփական դրդապատճառները:

Չնայած՝ բոլոր դեպքերում տեղի ունեցածը դրական անդրադարձներ էլ ունի իր մեջ՝ մեր պաշտոնյաներն այժմ արդեն մի փոքր ձգված կլինեն ու ձեռնպահ կմնան իրենց պատկերով եւ նմանությամբ վարվելու այս կամ այն իրավիճակում, գուցե կվերանայեն իրենց պահվածքն ու հնարավորությունները, իսկ նոր մարդիկ, ովքեր գալու են այս պաշտոններին, գուցե հիշեն, որ իրենց հետ էլ կարող է նույնը պատահել, մի քանի անգամ կչափեն ու կձեւեն այս կամ այն պաշտոնին հավակնելուց առաջ՝ պրոֆեսիոնալիզմով, դաստիարակությամբ եւ մարդկանց հետ քաղաքակիրթ շփվելու կարողությամբ պատրա՞ստ են այդ պաշտոնին:

ԵՐԵՎԱՆ

## Դեկտեմբերի 13-ին ավագանին կորոշի քաղաքապետի ընտրությունների օրը

**Ղեկավարվելով «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով, 45-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 48-րդ հոդվածի 2-րդ մասով եւ Երեւան քաղաքի ավագանու «Երեւան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N1-Ն որոշման հավելվածի 115-րդ կետով՝ Երեւանի քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար, քաղաքապետի առաջին տեղակալ Տ. Մարգարյանի 2010 թ. դեկտեմբերի 9-ի որոշմամբ 2010 թ. դեկտեմբերի 13-ին, ժամը 11:00-ին կգումարվի Հայաստանի Հանրապետության Երեւան քաղաքի ավագանու արտահերթ նիստ՝ հետեւյալ օրակարգով՝ Երեւանի քաղաքապետի ընտրությունների ժամկետը սահմանելու մասին: Այս մասին տեղեկատվություն է տարածել Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության վարչությունը:**

### Հայտարարություն

Սույն թվականի դեկտեմբերի 16-ին, ժամը 14:00–ին ՀՀ Արագածոտնի մարզի Կարճաղբյուրի գյուղապետարանում տեղի կունենա «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Կարճաղբյուր գյուղը սնող միջին ճնշման գազատարի վերատեղադրման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Տեղեկությունների համար դիմել ք.Երևան Կոմիտաս 29 հասցե: Հեռ. 22-14-85, 22-02-18, 22-15-68

ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

NAREGATSI ART INSTITUTE

**Դեկտեմբերի 13-ից 19-ի միջոցառումների ծրագիր**

**<u>դեկտեմբերի 13, երկուշաբթի</u>**
**ժ. 18:00 -** Համերգ (դասական, ժողովրդական). ներկայացնում է «Ֆորտե» գիտամշակութային, հաշմանդամների ՀԿ-ն:
Ծրագրում երաժշտական տարբեր ժանրերի ստեղծագործություններ:

**<u>դեկտեմբերի 14, երեքշաբթի</u>**
**ժ. 15:00 -** Գրական երեկո՝ նվիրված Մոնթե Մելքոնյանի հիշատակին:
Հանդիպում նրա զինակից ընկերների հետ:
Ծրագրում՝ «Ցեղին սիրտը» ֆիլմի ցուցադրություն (փաստավավերագրական):

**<u>դեկտեմբերի 15, չորեքշաբթի</u>**
**«Կինոերեկոներ չորեքշաբթի օրերին»**
**ժ. 19:00** - **«Էկզոտիկա»** / ՅExoticaՄՆ (դրամա, 103ր. 1994թ. Կանադա)
Ռեժ.՝ Ա. Էգոյան

**<u>դեկտեմբերի 16, հինգշաբթի</u>**
**ժ. 18:00** - Ցուցահանդես՝ «Ծաղիկները» (կոլաժ). ներկայանում է Մարի Մանուկյանը:
Ցուցահանդեսը կտեւի մինչեւ դեկտեմբերի 22-ը:

**<u>դեկտեմբերի 17, ուրբաթ</u>**
**ժ. 18:00** - Համերգ (դասական). ներկայանում են Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողները՝ Նարինե Ադոնցը, Լիլիթ Դուրինյանը, Արմինե Խաչատրյանը, Աննա Թաթոսյանը:
Ծրագրում՝ հայ, ռուս, արեւմտաեվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններից:

**ք. Երեւան,Վարդանանց 16/1 (010) 58-01-05, 58-08-50**
**- Vardanants Street 16/1, Yerevan,Armenia (010) 58-01-05**
**www.naregatsi.org**

Bundesministerium
für Bildung
und Forschung

DAAD
**Deutsher Akademischer Austasch Dienst**
**German Academic Exchange Service**

**Research in Germany**
**Land of Ideas**

### Հայտարարություն

Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունը (DAAD) դեկտեմբերի 14-ին, ժամը 10-ից մինչեւ 14-ը, Կոնգրես հյուրանոցում կազմակերպում է տեղեկատվական սեմինար՝ գիտական հետազոտությունը Գերմանիայում թեմայով: Երիտասարդ գիտնականները, ասպիրանտներն եւ ակադեմիական աստիճան ունեցող անձինք հնարավորություն կունենան տեղեկանալու Գերմանիայում գիտական հետազոտություն կատարելու հնարավորություններին, ինչպես նաեւ տարբեր ֆինանսական օժանդակություններ ստանալու վերաբերյալ: Գերմանացի եւ հայ գիտնականները կտեղեկացնեն իրենց գիտահետազոտական փորձի մասին եւ կպատասխանեն սեմինարի մասնակիցների հարցերին:

Հարցերի դեպքում կարող եք դիմել մեզ.
DAAD տեղեկատվական կենտրոն
Բաղրամյան փողոց 50
0019 Երեւան
Հեռ. 21 03 06
info@daad.am
www.daad.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝9.12.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: